EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ՉՈՐՐՈՐԴ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ՎԱՐԴԱՆՅԱՆԸ ԵՎ ԽԱԼԱՖՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(գանգատ թիվ 2265/12)

ՎՃԻՌ

Հոդված 34 • Դիմումատուների ազգականի նկատմամբ վատ վերաբերմունքը եւ նրա մահը ոստիկանությունում կալանքի տակ պահվելու ժամանակ • Զարմիկի՝ *դատարան դիմելու իրավունքը,* որն ինքնաբերաբար չի ճանաչվել՝ ի տարբերություն տուժողի մոր եւ քույրերի կամ եղբայրների իրավունքի • Դատարանում ներկայանալու համար զարմիկի իրավաչափ շահը ցույց տվող տեղեկությունների բացակայությունը • Ներպետական վարույթներում որպես տուժողի իրավահաջորդ հանդես գալու ինքնին բավարար չլինելը

Հոդված 2 եւ 3 (ընթացակարգային եւ նյութաիրավական) • Վատ վերաբերմունքի եւ մահվան անարդյունավետ քննությունը, որը կենտրոնացած էր բացառապես ինքնասպանության պաշտոնական վարկածի վրա • Հոդված 2-ի եւ 3-ի ընթացակարգային պահանջների լուրջ խախտումները • Պետության կողմից ապացուցման բեռը չկրելը՝ մահվան եւ վնասվածքների համար բավարար բացատրություն չտալով

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

8 նոյեմբերի 2022թ.

Սույն վճիռը վերջնական է դառնում Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված դեպքերում: Այն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Վարդանյանը եւ Խալաֆյանն ընդդեմ Հայաստանի գործով,

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Չորրորդ բաժանմունք), հանդես գալով Պալատի հետեւյալ կազմով՝

Գաբրիել Կուչկո-Ստադլմայեր [Gabriele Kucsko-Stadlmayer]՝ *Նախագահ,*

Թիմ Այքը [Tim Eicke],

Յոնկո Գրոզեւ [Yonko Grozev],

Արմեն Հարությունյան [Armen Harutyunyan],

Պերե Պաստոր Վիլանովա [Pere Pastor Vilanova],

Յոլիեն Շուկինգ [Jolien Schukking],

Անա Մարիա Գեռա Մարտինս [Ana Maria Guerra Martins]՝ *դատավորներ,*

եւ Իլզե Ֆրայվըրթ [Ilse Freiwirth]՝ *Բաժանմունքի քարտուղարի տեղակալ,*

հաշվի առնելով՝

«Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (Կոնվենցիա) 34-րդ հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետության չորս քաղաքացիների՝ տկն Անահիտ Վարդանյանի, պրն Վարդան Խալաֆյանի, պրն Հմայակ Խալաֆյանի եւ տկն Անի Խալաֆյանի (դիմումատուներ) կողմից ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ 2011 թվականի դեկտեմբերի 14-ին Դատարան ներկայացված գանգատը (թիվ 2265/12),

իրենց հարազատի՝ պրն Վահան Խալաֆյանի մահվան, նրա նկատմամբ ենթադրյալ վատ վերաբերմունքի եւ նրա ապօրինի կալանավորմանը, ինչպես նաեւ իշխանության մարմինների կողմից ենթադրաբար արդյունավետ քննություն չիրականացնելուն առնչվող բողոքների վերաբերյալ Հայաստանի կառավարությանը (Կառավարություն) ծանուցելու եւ գանգատը մնացած մասով անընդունելի հայտարարելու մասին որոշումը,

կողմերի դիտարկումները,

2022 թվականի հոկտեմբերի 4-ին անցկացնելով դռնփակ խորհրդակցություն, կայացրեց հետեւյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Գործը վերաբերում է 24 տարեկան հասակում պրն Վահան Խալաֆյանի մահվանը՝ ոստիկանությունում կալանքի տակ պահվելու ընթացքում, եւ դրանով հիմնականում հարցեր են բարձրացվում Կոնվենցիայի 2-րդ եւ 3-րդ հոդվածների համաձայն:

ՓԱՍՏԵՐԸ

2. Դիմումատուները ծնվել են համապատասխանաբար 1962, 1986, 1975 եւ 1992 թվականներին եւ բնակվում են Չարենցավան քաղաքում: Դիմումատուներին ներկայացրել են պրակտիկ գործունեությամբ չզբաղվող իրավաբաններ պրն Ա. Ղազարյանը եւ պրն Ա. Զեյնալյանը:

3. Կառավարությունը ներկայացրել է կառավարության լիազոր ներկայացուցիչ պրն Գ. Կոստանյանը, իսկ այնուհետեւ՝ Հայաստանի Հանրապետության միջազգային իրավական հարցերով ներկայացուցիչ պրն Ե. Կիրակոսյանը:

4. Գործով փաստերը կարելի է ամփոփել հետեւյալ կերպ:

5. Առաջին դիմումատուն՝ Անահիտ Վարդանյանը, Վահան Խալաֆյանի մայրն է: Երկրորդ, երրորդ եւ չորրորդ դիմումատուները՝ Վարդան, Հմայակ եւ Անի Խալաֆյանները, համապատասխանաբար տուժողի եղբայրը, զարմիկը եւ քույրն են:

I. ՎԱՀԱՆ ԽԱԼԱՖՅԱՆԻ ՄԱՀԸ

6. 2010 թվականի ապրիլի 6-ին ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային գլխավոր քննչական վարչության քննչական բաժնի (ԿՄԳՔՎՔԲ) Չարենցավանի քրեական հետախուզության բաժանմունքում հարուցվել է քրեական գործ՝ ենթադրյալ գողության դեպքի առթիվ:

7. 2010 թվականի ապրիլի 13-ին՝ ժամը 10-ի սահմաններում, Վահան Խալաֆյանը եւ եւս երեք կասկածյալներ գողության դեպքի առթիվ հարցաքննության համար բերման են ենթարկվել Ոստիկանության Չարենցավանի բաժին՝ քրեական հետախուզության բաժանմունքի պետ Ա.Հ.-ի բանավոր հրամանով: Վահան Խալաֆյանի ձերբակալության վրա, *inter alia* (ի թիվս այլոց), ազդեցություն է ունեցել ոստիկանության ծառայող Մ.Հ.-ն, եւ նրա տեղափոխումը ոստիկանության բաժին չի արձանագրվել արգելանքի տակ պահվող անձանց հաշվառման համապատասխան գրանցամատյանում:

8. Համաձայն Վահան Խալաֆյանի մահվան դեպքի առթիվ հետագայում հարուցված քրեական գործի արձանագրության՝ Վահան Խալաֆյանը ոստիկանության բաժնում բերման է ենթարկվել Ա.Հ.-ի աշխատասենյակ, որտեղ Ա.Հ.-ն բռնության սպառնալիքով նրան ստիպել է խոստովանել հանցագործությունը: Այն բանից հետո, երբ Վահան Խալաֆյանը հրաժարվել է խոստովանել, Ա.Հ.-ն բռնություն է գործադրել նրա նկատմամբ՝ բռունցքներով եւ ոտքերով հարվածելով մարմնի տարբեր մասերին ոստիկանության ծառայող Մ.Հ.-ի ներկայությամբ: Ժամը 16:55-ի սահմաններում ոստիկանության ծառայող Մ.Հ.-ն կազմել է «*արձանագրություն անձին բերման ենթարկելու մասին*», որտեղ նշել է, որ Վահան Խալաֆյանը ոստիկանության բաժին բերման է ենթարկվել ժամը 16:55-ին՝ գողություն կատարելու կասկածանքով: Ժամը 17:00-ի սահմաններում ոստիկանության ծառայող Ա.Հ.-ն երեք այլ ծառայողների՝ Մ.Հ.-ի, Գ.Դ.-ի եւ Գ.Ղ.-ի ներկայությամբ կրկին հարձակվել է Վահան Խալաֆյանի վրա պրոֆիլակտիկայի բաժանմունքի պետ Կ.Մ.-ի աշխատասենյակում: Հարձակումից հետո Ա.Հ.-ն լքել է Կ.Մ.-ի աշխատասենյակը: Հոգեբանորեն շատ լարված վիճակում գտնվող Վահան Խալաֆյանը, որը նստած էր աթոռին, ձեռքը տարել է դեպի իր առջեւ գտնվող

պահարանը, որտեղ պահվում էին տարբեր խոհանոցային պարագաներ, այդ թվում՝ խոհանոցային դանակ, բռնել է դանակը, ոտքի կանգնել, բարձրացրել վերնահագուստը եւ դանակի երկու հարված հասցրել իր որովայնին։ Ոստիկանության ծառայողներ Մ.Հ.-ն եւ Գ.Դ.-ն վազել են նրա կողմը, սակայն չեն կարողացել կանխել դանակահարությունը։ Վահան Խալաֆյանն ուշաթափվել եւ ընկել է հատակին։ Սենյակ են ներխուժել ոստիկանության այլ ծառայողներ։ Վահան Խալաֆյանին, որը հատակին անգիտակից ընկած էր, ցուցաբերվել է առաջին բուժօգնություն։

9. Դիմումատուները վիճարկել են դեպքերի վերը նշված վարկածը եւ պնդել, որ իրականում Վահան Խալաֆյանը կորցրել է գիտակցությունը վատ վերաբերմունքի հետեւանքով ստացած գլխուղեղի վնասվածքի պատճառով։ Հանցագործությունը կոծկելու համար ոստիկանության ծառայողները որոշել էին ստեղծել ինքնասպանության տպավորություն՝ Վահան Խալաֆյանի որովայնին դանակի երկու հարված հասցնելով։

10. Ժամը 17:15-ին կանչվել է շտապօգնություն, որը Վահան Խալաֆյանին տեղափոխել է հիվանդանոց, որտեղ նա ժամը 17:50-ին մահացել է։

11. Չպարզված ժամին ոստիկանության ծառայողներ Մ.Հ.-ն եւ Գ.Դ.-ն միջադեպի մասին առանձին զեկուցել են ոստիկանության Չարենցավանի բաժնի պետին։ Մ.Հ.-ն հայտնել է, որ ինքը եւ Գ.Դ.-ն Վահան Խալաֆյանի հետ մենակ են եղել Կ.Մ.-ի աշխատասենյակում, երբ Վահան Խալաֆյանը պահարանից վերցրել է խոհանոցային դանակը եւ դրանով հարված հասցրել իր որովայնին։ Նրանք միջամտել էին եւ արգելել նրան շարունակել ինքնավնասումը։ Մ.Հ.-ն իր զեկուցագրում նշել է, որ Վահան Խալաֆյանը ոստիկանության բաժին բերման է ենթարկվել ժամը 16.55-ին։ Ոստիկանության ծառայող Գ.Դ.-ն իր զեկուցագրում նշել է, որ ինքը նկատել է, թե ինչպես է Վահան Խալաֆյանը պահարանից հանել դանակը, եւ իրեն հարվածներ հասցնելուց հետո այն գցել հատակին։ Ամբողջ միջադեպը տեւել է մոտ մեկից երկու վայրկյան։

12. Ոստիկանության ավագ ծառայողը ցուցմունք է վերցրել Մ.Հ.-ից, որում նա ներկայացրել է իրադարձությունների նմանատիպ նկարագրություն։ Մ.Հ.-ն նշել

է, որ չի նկատել, թե ինչպես է Վահան Խալաֆյանը պահարանից վերցրել դանակը, այլ նկատել է միայն այն պահը, երբ նա արդեն դանակահարել է իրեն՝ փորձելով ձախից աջ կտրել փորը։ Այնուհետեւ նա եւ Գ.Դ.-ն առջեւից եւ հետեւից բռնել են նրա ձեռքերը, իսկ Վահան Խալաֆյանը դանակը ձեռքից գցել է։ Ոստիկանության ծառայող Գ.Ղ.-ն այդ պահին մտել է աշխատասենյակ։ Մ.Հ.-ն հայտարարել է, որ ինքը տեղյակ չի եղել պահարանում գտնվող դանակի մասին։ Նրա ներկայությամբ ոչ ոք չի բացել պահարանի դուռը կամ դանակը դրել կամ հանել պահարանից։ Նա դանակահարությունից հետո նկատել է, որ պահարանի դուռը կիսաբաց է եղել, եւ որքան հիշում էր, նախկինում էլ այն ամբողջությամբ փակված չի եղել, ինչը կարող էր թույլ տալ Վահան Խալաֆյանին նկատել դանակը, երբ նստած էր պահարանի կողքին։ Մ.Հ.-ն հայտնել է նաեւ, որ Վահան Խալաֆյանը ոստիկանության բաժին բերման է ենթարկվել ժամը 16:55-ին, եւ որ միջադեպից առաջ ոչ ոք նրա նկատմամբ վատ վերաբերմունք չի ցուցաբերել։ Ցուցմունքի վերջում Մ.Հ.-ն հավելել է, որ հիմա հիշում է, թե ինչպես է Վահան Խալաֆյանը հանել դանակը պահարանից։ Սակայն Վահան Խալաֆյանն այնքան արագ է դանակահարել իրեն, որ նրանց համար անհնար էր դա կանխել։

II. ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾՈՎ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԸ

Ա. Քննությունը

13. Ժամը 20:40-ին ԿՄԳՔՎՔԲ-ի քննիչներից մեկը (այսուհետ՝ ոստիկանության քննիչ) ոստիկանության ծառայողներ Մ.Հ.-ի եւ Գ.Դ.-ի մասնակցությամբ իրականացրել է դեպքի վայրի զննություն։ Ըստ նրանց՝ Վահան Խալաֆյանը նստած է եղել պահարանին ամենամոտ գտնվող աթոռին՝ մոտ 30 սմ հեռավորության վրա։ Գ.Դ.-ն նստած է եղել գրասեղանի մոտ, իսկ Մ.Հ.-ն նստած է եղել բազմոցներից մեկին։ Նստած ժամանակ Վահան Խալաֆյանը բացել է պահարանի ձախ կողմում գտնվող դուռը, որը կիսաբաց է եղել, դարակից վերցրել է դանակը, ոտքի կանգնել, ձախ ձեռքով բարձրացրել վերնահագուստը եւ աջ ձեռքով դանակով

հարվածել որովայնին: Նրանք բղավել են եւ շտապել կանգնեցնել նրան, սակայն ժամանակին չեն կարողացել հասնել նրան: Վահան Խալաֆյանն ինքն իրեն դանակով հարվածելուց հետո ընկել է որովայնի վրա, իսկ դանակն ընկել է նրա կողքին: Նրանք անհապաղ օգնություն են ցուցաբերել, շտապօգնություն են կանչել եւ նրան տեղափոխել են հիվանդանոց: Գ.Դ.-ն հայտնել է նաեւ, որ Վահան Խալաֆյանին առաջին բուժօգնություն ցուցաբերելիս նա դանակը կոթի ծայրից վերցրել է եւ նորից դրել դարակում: Դանակը, որն ուներ 15 սմ երկարությամբ շեղբ եւ 13 սմ երկարությամբ մետաղական կոթ եւ ընկած էր դարակներից մեկի վրա, առգրավվել է ոստիկանության քննիչի կողմից որպես ապացույց:

14. Ոստիկանության քննիչը որոշում է կայացրել քրեական գործ հարուցել Քրեական օրենսգրքի (ՔՕ) 110-րդ հոդվածի (Ինքնասպանության հասցնելը) 1-ին մասով (տե՛ս ստորեւ՝ 55-րդ պարբերությունը): Որոշման մեջ նշվում էր, որ ուսումնասիրելով Վահան Խալաֆյանի ինքնասպանության դեպքի առթիվ պատրաստված նյութերը՝ ոստիկանության քննիչը պարզել է, որ՝

> «2010 թվականի ապրիլի 13-ին, ժամը 16:50-ին [Վահան Խալաֆյանը] բերման է ենթարկվել [Ոստիկանության Չարենցավանի բաժին] գողություն կատարելու կասկածանքով, [ԿՄԳՔՎՔԲ]-ի կողմից քննված ... քրեական գործի շրջանակներում: Ժամը 17:15-ի սահմաններում, պրոֆիլակտիկայի բաժանմունքի պետի աշխատասենյակում գտնվելու ժամանակ [նա] պահարանից վերցրել է խոհանոցային դանակը եւ դրանով հարվածել իր որովայնին՝ պատճառելով մարմնական վնասվածքներ: Այնուհետեւ Վահան Խալաֆյանը շտապօգնության մեքենայով տեղափոխվել է [հիվանդանոց], որտեղ ստացած վնասվածքներից մահացել է»:

15. 2010 թվականի ապրիլի 14-ին երրորդ դիմումատուն քրեական գործով վարույթի նպատակով ճանաչվել է տուժողի իրավահաջորդ:

16. Քրեական գործի քննությունը 2010 թվականի ապրիլի 15-ին ստանձնել է Հատուկ քննչական ծառայության քննիչը (այսուհետ՝ ՀՔԾ քննիչ):

17. Նույն օրը Վահան Խալաֆյանի դին ենթարկվել է դատաբժշկական փորձաքննության, որի եզրակացությունները շարադրվել են դատաբժշկական

փորձագետի թիվ 353 եզրակացությունում։ Փորձագետը նշել է, որ համաձայն ոստիկանության քննիչի՝ փորձաքննություն նշանակելու մասին որոշման՝ Վահան Խալաֆյանն ինքնասպանություն է գործել։ Նա արձանագրել է հետեւյալ վնասվածքները. դանակի պերֆորացիոն հարված/որովայնի առջեւի հատվածում կտրված վերք, որի հետեւանքով վնասվել են վիսցերալ ճարպը եւ զարկերակներն ու երակները, որոնք տեղակայված են բարակ աղիքի միջընդերքում, ինչը հանգեցրել է սուր ներքին արյունահոսության (վնասվածք թիվ 1), դանակի պերֆորացիոն հարված/որովայնի առջեւի հատվածում կտրված վերք՝ առանց ներքին օրգանների վնասման (վնասվածք թիվ 2), որովայնի առջեւի հատվածում ընդհատվող երկու քերծվածք, արյունազեղումներ գլխի գագաթային հատվածի տակ, քերծվածքներ վերին շուրթին, կզակի ձախ կողմում եւ ձախ սրունքին, ճանկռվածքներ քթին, ձախ եւ աջ ոտքերի սրունքների առջեւի հատվածներում, ծնկի հետեւի փոսիկում, աջ ոտքի սրունքաթաթային հոդին եւ աջ ձեռքի արմունկի հետեւի կողմում։ Ըստ փորձագետի՝ Վահան Խալաֆյանի մահը վրա է հասել 1-ին վնասվածքի հետեւանքով առաջացած սուր ներքին արյունահոսությունից, իսկ վնասվածք թիվ 2-ի եւ մահվան միջեւ պատճառահետեւանքային կապը բացակայում է։ Թե՛ թիվ 1 եւ թե՛ թիվ 2 վնասվածքները հասցվել են կյանքի ընթացքում՝ մահից մի քանի տասնյակ րոպե առաջ։ Թիվ 1 վնասվածքի վերքային խողովակն ունեցել է 10-12 սմ խորություն եւ առջեւից հետ ուղղություն, աջից ձախ թեքություն եւ վերեւից ներքեւ թեթեւակի թեքություն մարմնի ուղիղ առանցքի նկատմամբ, իսկ վնասվածք թիվ 2-ն ունեցել է 3 սմ խորություն եւ առջեւից հետ ուղղություն՝ մարմնի ուղիղ առանցքի նկատմամբ աջից ձախ եւ վերեւից ներքեւ թեքությամբ։ Մնացած բոլոր վնասվածքները նույնպես հասցվել են կյանքի ընթացքում՝ մահից ոչ շատ առաջ՝ բացառությամբ 2-3 օր առաջ ստացված աջ արմունկի ճանկռվածքի։ Որովայնի քերծվածքները հասցվել են սուր ծայր ունեցող առարկայով, իսկ արյունազեղումները եւ ճանկռվածքներն առաջացել են սահմանափակ մակերես ունեցող բութ առարկայով կամ առարկաներով։ Քերծվածքները, արյունազեղումները եւ ճանկռվածքները չեն որակվել որպես թեթեւ վնասվածքներ, եւ դրանց եւ մահվան միջեւ պատճառահետեւանքային կապը

բացակայում է: Հնարավոր է, որ որովայնի հատվածում դանակի հարվածը/կտրած վերքերը պատճառվել են տվյալ դանակով, եւ որ դրանք հասցվել են ինքնավնասման արդյունքում:

18. Նույն օրը ՀՔԾ քննիչի կողմից նշանակվել է դանակի դատահետքաբանական փորձաքննություն՝ պարզելու, թե արդյոք դրա վրա մատնահետքեր են եղել, թե՝ ոչ, եւ մի շարք այլ հարակից հարցեր:

19. 2010 թվականի ապրիլի 19-ին դատահետքաբանական փորձագետի կողմից տրվել է թիվ 11411002 եզրակացությունը: Փորձագետը նշել է, որ համաձայն ոստիկանության քննիչի՝ փորձաքննություն նշանակելու մասին որոշման՝ Վահան Խալաֆյանն ինքնասպանություն է գործել: Ի պատասխան առաջադրված հարցերի՝ փորձագետը եզրակացրել է, որ ծայրի ստորին մասում առկա են քրտինքի եւ ճարպի մասնիկներ, որոնք պարունակում են պապիլյար ծալքերի աննշան հետքեր, որոնք թերի են, աղավաղված եւ մասամբ համընկնող եւ հետեւաբար պիտանի չեն համեմատական վերլուծության համար:

20. 2010 թվականի ապրիլի 19-ին եւ 20-ին ՀՔԾ քննիչը հարցաքննել է գողության մեղադրանքով երեք կասկածյալներին, որոնք բերման էին ենթարկվել Վահան Խալաֆյանի հետ միասին (տե՛ս վերեւում՝ 7-րդ պարբերությունը), ինչպես նաեւ այդ օրը հերթապահություն իրականացնող ոստիկանության երկու ծառայողներին: Առաջինները պնդել են, որ իրենց ձերբակալությունները կատարվել են ապրիլի 13-ի վաղ առավոտյան, իսկ վերջինները խոստովանել են, որ ձերբակալությունները համապատասխան գրանցամատյանում մինչեւ ուշ կեսօր գրանցված չեն եղել:

21. 2010 թվականի ապրիլի 21-ին ՀՔԾ քննիչը որպես վկա հարցաքննել է ոստիկանության ծառայողներ Մ.Հ.-ին, Գ.Դ.-ին եւ Ա.Հ.-ին, որոնք պատմել են այդ օրվա դեպքերը: Մ.Հ.-ն խոստովանել է, որ Վահան Խալաֆյանին ոստիկանություն «հրավիրել են» առավոտյան ժամը 10-ի սահմաններում՝ Ա.Հ.-ի հետ «զրուցելու» համար, սակայն պնդել է, որ ավելի ուշ իրեն թույլ են տվել հեռանալ բաժնից, ապա կրկին բերման են ենթարկել ժամը 16:55-ին: Մ.Հ.-ն եւ Գ.Դ.-ն պնդել են, որ

դանակահարությունն այնքան արագ է տեղի ունեցել, որ իրենց համար անհնար է եղել այն կանխել։ Ա.Հ.-ն հայտնել է, որ Վահան Խալաֆյանին ժամը 15:30-ից հետո ինչ-որ պահի կալանքի են վերցրել։ Երեք ծառայողներն էլ հերքել են, որ ոստիկանության բաժնում որեւէ մեկը վատ վերաբերմունք է ցուցաբերել Վահան Խալաֆյանի նկատմամբ։

22. Նույն օրը ձերբակալվել է ոստիկանության ծառայող Մ.Հ.-ն։

23. 2010 թվականի ապրիլի 23-ին, Մ.Հ.-ին մեղադրանք է առաջադրվել ՔՕ-ի 110-րդ հոդվածի 1-ին մասով եւ 309-րդ հոդվածի 3-րդ մասով (պաշտոնեական լիազորություններն անցնելը, որն առաջացրել է ծանր հետեւանքներ) (տե՛ս ստորեւ՝ 58-րդ պարբերությունը)։ Նա մեղադրվել է 2010 թվականի ապրիլի 13-ին՝ ժամը 10:00-ի սահմաններում, առանց ձերբակալման մասին որոշման եւ բացառապես ոստիկանության ծառայող Ա.Հ.-ի բանավոր կարգադրության հիման վրա Վահան Խալաֆյանին ոստիկանության բաժին տանելու մեջ։ Այնուհետեւ նա Վահան Խալաֆյանին ապօրինի պահել է ոստիկան Կ.Մ.-ի աշխատասենյակում մինչեւ ժամը մոտավորապես 17:00-ն եւ վատ վերաբերմունք ցուցաբերել նրա նկատմամբ, դրանով իսկ նրան հասցրել ինքնասպանության։ Նույն օրը ոստիկանության ծառայող Մ.Հ.-ն դատարանի որոշմամբ կալանավորվել է։

24. 2010 թվականի ապրիլի 26-ին ՀՔԾ քննիչը հարցաքննել է Մ.Հ.-ին որպես մեղադրյալ, որը հայտարարել է, որ Վահան Խալաֆյանի նկատմամբ բռնություն է գործադրվել Ա.Հ.-ի կողմից մոտ երկուսից երեք րոպե տեւած հարցաքննության ժամանակ։ Մ.Հ.-ն բռնությամբ հետ է մղվել, սակայն չի միջամտել, քանի որ Ա.Հ.-ն եղել է իր վերադասը։ Այնուհետեւ նա դուրս է եկել ոստիկանության բաժնից եւ վերադարձել ժամը 16:00-ի սահմաններում։ Դրանից կարճ ժամանակ անց, երբ գտնվում էր Կ.Մ.-ի աշխատասենյակում, Ա.Հ.-ն հանձնարարել էր կազմել Վահան Խալաֆյանին ոստիկանություն բերման ենթարկելու մասին արձանագրությունը, չնայած իրականում դա տեղի էր ունեցել առավոտյան ժամը 10:00-ի սահմաններում։ Կ.Մ.-ի աշխատասենյակում նաեւ ներկա են գտնվել եւս երկու սպաներ՝ Գ.Դ.-ն եւ Գ.Ղ.-ն։ Ա.Հ.-ն շարունակել է ծեծել Վահան Խալաֆյանին իրենց

ներկայությամբ՝ բռունցքներով հարվածներ հասցնելով նրա մարմնի տարբեր մասերին, որը տեւել է մոտ երեքից չորս րոպե, որից կարճ ժամանակ հետո Ա.Հ.-ն դուրս է եկել աշխատասենյակից։ Մ.Հ.-ն այնուհետեւ նկարագրել է դանակահարության միջադեպը, որը տեղի է ունեցել իր, Գ.Դ.-ի եւ Գ.Ղ.-ի ներկայությամբ, եւ պնդել, որ բացի Ա.Հ.-ից Վահան Խալաֆյանի նկատմամբ ոչ ոք վատ վերաբերմունք չի ցուցաբերել։

25. Նույն օրը ոստիկանության ծառայողներ Մ.Հ.-ի, Ա.Հ.-ի, Գ.Դ.-ի եւ Գ.Ղ.-ի մասնակցությամբ անցկացվել են մի շարք անընդմեջ առերեսումներ եւ հարցաքննություններ։

Մ.Հ.-ի եւ Գ.Դ.-ի միջեւ առերեսման ժամանակ վերջինս հայտարարել է, որ ինքը միայն նկատել է, թե ինչպես է Ա.Հ.-ն մի քանի անգամ ապտակել Վահան Խալաֆյանին, եւ հնարավոր է՝ նկատած չլինի բռնության մնացած դրսեւորումները, քանի որ հեռուստացույց է դիտել։

Գ.Ղ.-ն հարցաքննվել է որպես վկա եւ հայտնել, որ իր ներկայությամբ Վահան Խալաֆյանի նկատմամբ ոչ ոք վատ վերաբերմունք չի ցուցաբերել, եւ որ դանակահարության դեպքին ականատես չի եղել, քանի որ այդ պահին եղել է իր աշխատասենյակում։ Ավելի ուշ՝ Մ.Հ.-ի հետ առերեսման ժամանակ, Գ.Ղ.-ն ընդունել է, որ ականատես է եղել, թե ինչպես է Ա.Հ.-ն մի քանի անգամ բռունցքներով եւ ոտքերով հարվածել Վահան Խալաֆյանին Կ.Մ.-ի աշխատասենյակում՝ փորձելով ստիպել նրան խոստովանել։

Ա.Հ.-ի եւ Մ.Հ.-ի միջեւ առերեսման ժամանակ վերջինս Ա.Հ.-ին մեղադրել է Վահան Խալաֆյանի նկատմամբ վատ վերաբերմունքի, այդ թվում՝ ոտքերով եւ բռունցքով հարվածելու մեջ։

Ոստիկանության ծառայող Ա.Հ.-ն առերեսվել է նաեւ ոստիկանության ծառայողներ Գ.Դ.-ի եւ Գ.Ղ.-ի հետ, որոնք երկուսն էլ հայտնել են, որ տեսել են, թե ինչպես է Ա.Հ.-ն միջադեպից առաջ՝ նախքան ոստիկանության ծառայող Կ.Մ.-ի

աշխատասենյակը լքելը, մեկ անգամ ապտակել Վահան Խալաֆյանին։

Ոստիկանության ծառայող Ա.Հ.-ն հերքել է, որ Վահան Խալաֆյանի նկատմամբ վատ վերաբերմունք է ցուցաբերել, եւ Մ.Հ.-ին, Գ.Դ.-ին եւ Գ.Ղ.-ին մեղադրել է ստելու մեջ։

26. Նույն օրը ոստիկանության ծառայող Ա.Հ.-ն ձերբակալվել է։

27. 2010 թվականի ապրիլի 29-ին Ա.Հ.-ին մեղադրանք է առաջադրվել ՔՕ-ի 309-րդ հոդվածի 3-րդ մասով (տե՛ս ստորեւ՝ 58-րդ պարբերությունը)։ Նրան մեղադրանք է առաջադրվել ոստիկանության բաժնում Վահան Խալաֆյանի նկատմամբ վատ վերաբերմունք ցուցաբերելու համար՝ դրանով իսկ անցնելով իր լիազորությունները, ինչն ազգուշությամբ առաջացրել է ծանր հետեւանքներ։ Ա.Հ.-ն հարցաքննվել է, սակայն հրաժարվել է ցուցմունք տալուց։ Նույն օրը նա դատարանի որոշմամբ կալանավորվել է։

28. 2010թ. ապրիլի 29-ից մայիսի 18-ն ընկած ժամանակահատվածում ՀՔԾ քննիչը հարցաքննել է մի շարք վկաների, այդ թվում՝ ոստիկանության Չարենցավանի բաժնի այլ ծառայողների, երկրորդ եւ երրորդ դիմումատուներին, շտապօգնության խմբի անդամներին եւ մի քանի այլ անձանց։ Ոստիկանության ծառայողներ Գ.Դ.-ն եւ Գ.Ղ.-ն որպես վկա լրացուցիչ հարցաքննվել են. Գ.Դ.-ն հայտնել է, որ Ա.Հ.-ն աջ եւ ձախ կողմերից ապտակել է Վահան Խալաֆյանին, սակայն չէր կարողանում հիշել, թե քանի անգամ, իսկ Գ.Ղ.-ն ընդունել է, որ դանակահարության դեպքի ժամանակ գտնվել է Կ.Մ.-ի աշխատասենյակում։

29. 2010 թվականի ապրիլին եւ մայիսին անցկացվել են մի շարք այլ դատաբժշկական փորձաքննություններ, այդ թվում՝ հետմահու դատահոգեբանական եւ հոգեբուժական փորձաքննություն եւ լրացուցիչ դատաբժշկական փորձաքննություն։ Առաջինով եզրակացվել է, որ նախքան Վահան Խալաֆյանի մահը նա գտնվել է հոգեբանական զգալիորեն սթրեսային վիճակում, ինչը պատճառահետեւանքային կապ է ունեցել ոստիկանության

ծառայող Ա.Հ.-ի գործողությունների հետ: Վահան Խալաֆյանը կյանքի ընթացքում չի տառապել որեւէ քրոնիկ հոգեկան հիվանդությամբ: Նրա վարքագծում չեն եղել նաեւ հոգեկան խիստ հուզմունքի վիճակի նշաններ: Լրացուցիչ բուժզննության արդյունքներով՝ Վահան Խալաֆյանի տաբատի հետեւի մասում եւ շապիկի թեւատակերի հատվածում կղանքի հետքեր են հայտնաբերվել: Քննարկվող փորձագիտական բոլոր եզրակացություններում հղում է կատարվել քննիչի՝ փորձաքննություններ կարգադրելու մասին որոշումներին, ըստ որոնց՝ Վահան Խալաֆյանն ինքնասպանություն է գործել:

30. 2010 թվականի մայիսի 10-ին հրապարակվել են Հայաստանի ոստիկանությունում անցկացված ծառայողական քննության եզրակացությունները: Հանձնարարվել է կարգապահական տույժ կիրառել ոստիկանության ծառայողներ Գ.Դ.-ի եւ Գ.Ղ.-ի նկատմամբ՝ չբացահայտելու համար այն փաստը, որ նրանք ականատես են եղել Կ.Մ.-ի աշխատասենյակում Վահան Խալաֆյանի նկատմամբ Ա.Հ.-ի կողմից ցուցաբերված վատ վերաբերմունքին: Այնուհետեւ հանձնարարվել է կասեցնել ոստիկանության ծառայողներ Ա.Հ.-ի եւ Մ.Հ.-ի ծառայությունը եւ որոշել նրանց կարգապահական տույժի հարցը՝ քրեական գործի ավարտից հետո:

31. 2010 թվականի մայիսի 21-ին ոստիկանության ծառայող Մ.Հ.-ին առաջադրված մեղադրանքը փոխարինվել է ՔՕ-ի 308-րդ հոդվածի (Պաշտոնեական լիազորությունները չարաշահելը) 1-ին մասով (տե՛ս ստորեւ՝ 57-րդ պարբերությունը) այն հիմքով, որ նա ականատես է եղել ոստիկանության ծառայող, իր անմիջական ղեկավար Ա.Հ.-ի կողմից Վահան Խալաֆյանի նկատմամբ ցուցաբերված վատ վերաբերմունքին, սակայն օգտագործել է իր պաշտոնեական դիրքն ընդդեմ ծառայության շահերի՝ ընտրելով լավ աշխատանքային հարաբերություններ պահպանելու համար Ա.Հ.-ին եսասիրական նպատակներով մարտահրավեր չնետելը:

32. Նույն օրը Մ.Հ.-ն ազատ է արձակվել կալանքից՝ իր բնակության վայրից չհեռանալու պարտավորությամբ:

33. 2010 թվականի մայիսի 24-ին Հայաստանի ոստիկանապետը

ծառայողական քննության եզրակացություններում արված առաջարկությունների (տե՛ս վերեւում՝ 30-րդ պարբերությունը) հիման վրա հրաման է արձակել՝ կասեցնելով ոստիկանության ծառայողներ Ա.Հ.-ի եւ Մ.Հ.-ի ծառայությունը եւ որպես կարգապահական տույժ իջեցնելով ոստիկանության ծառայողներ Գ.Դ.-ի եւ Գ.Ղ.-ի պաշտոնը։

34. 2010 թվականի հունիսի 2-ին ոստիկանության ծառայողներ Գ.Դ.-ին եւ Գ.Ղ.-ին մեղադրանք է առաջադրվել ՔՕ-ի 308-րդ հոդվածի 1-ին մասով՝ նույն հիմքով, ինչ Մ.Հ.-ին առաջադրված մեղադրանքն էր (տե՛ս վերեւում՝ 31-րդ պարբերությունը)։ Նրանք մասամբ ընդունել են իրենց մեղքը՝ խոստովանելով, որ չեն հայտնել Ա.Հ.-ի կողմից Վահան Խալաֆյանի նկատմամբ վատ վերաբերմունքի մասին, սակայն պնդել են, որ ի վիճակի չեն եղել դա կանխելու, քանի որ ապտակներն արագ են հասցվել։

35. 2010 թվականի հունիսի 7-ին ոստիկանության ծառայող Ա.Հ.-ին առաջադրված մեղադրանքը լրացվել է Վահան Խալաֆյանին ենթադրյալ վատ վերաբերմունքի հետեւանքով բութ առարկայով հասցված վնասվածքների մասին մանրամասներով, ինչպես նկարագրված է դատաբժշկական փորձաքննության թիվ 353 եզրակացության մեջ (տե՛ս վերեւում՝17-րդ պարբերությունը)։

36. Նույն օրը ՀՔԾ քննիչը որոշել է քրեական հետապնդում չիրականացնել ոստիկանության Չարենցավանի բաժնի ոստիկանության մի շարք ծառայողների նկատմամբ, այդ թվում՝ այն անձանց, որոնք մասնակցել են Վահան Խալաֆյանին եւ այլ կասկածյալների բերման ենթարկելուն, եւ այն անձանց, որոնք արգելանքի տակ պահվող անձանց հաշվառման համապատասխան գրանցամատյանում կատարել են գրառումներ։ Այդ որոշման մեջ նշվել է, որ կասկածյալները ոստիկանության բաժին են բերվել 2010 թվականի ապրիլի 13-ի առավոտյան, սակայն ոստիկանության ծառայող Ա.Հ.-ի ցուցումներով համապատասխան գրանցամատյանում տվյալ պահին որեւէ գրառում չի կատարվել, եւ այդ գրառումները կատարվել են միայն ժամը 15:30-ից հետո։ Որոշմամբ եզրակացվել է, որ ոստիկանության ծառայողների գործողություններում *հանցակազմ*ը բացակայում է,

քանի որ նրանք գործել են ոստիկանության ծառայող Ա.Հ.-ի ցուցումով եւ վերահսկողությամբ, որն այդ պահին ներգրավված էր դատաքննությանը, եւ կարծել են, որ իրենց գործողություններն օրինական են:

37. 2010 թվականի հունիսի 18-ին քննությունն ավարտվել է: Ըստ մեղադրական եզրակացության՝ Վահան Խալաֆյանը բերման է ենթարկվել 2010 թվականի ապրիլի 13-ին՝ ժամը 10:00-ի սահմաններում, ոստիկանության ծառայող Ա.Հ.-ի բանավոր ցուցումով, սակայն նրան ազատությունից զրկելը մնացել է չարձանագրված մինչեւ ժամը 16:55-ը: Այն բանից հետո, երբ Վահան Խալաֆյանը հրաժարվել է խոստովանել հանցագործությունը, ոստիկանության ծառայող Ա.Հ.-ն փորձել է նրան ստիպել դա անել՝ նրա նկատմամբ բռնություն գործադրելով, այդ թվում՝ բռունցքներով եւ ոտքերով հարվածներ հասցնելով Վահան Խալաֆյանի մարմնի տարբեր մասերին: Դա տեղի է ունեցել սկզբում Ա.Հ.-ի, իսկ ավելի ուշ՝ ժամը 17-ի սահմաններում, Կ.Մ.-ի աշխատասենյակում: Ոստիկանության ծառայողներ Մ.Հ.-ն, Գ.Դ.-ն եւ Գ.Ղ.-ն ականատես են եղել բռնությանը, սակայն չեն միջամտել եւ կանխել այն: Վատ վերաբերմունքի արդյունքում Վահան Խալաֆյանն ստացել է մի շարք թեթեւ վնասվածքներ: Վահան Խալաֆյանը, վատ վերաբերմունքի պատճառով գտնվելով հոգեբանական ծանր վիճակում, Կ.Մ.-ի աշխատասենյակում գտնվող պահարանից վերցրել է խոհանոցային դանակը, երկու անգամ հարվածել իր որովայնին՝ հասցնելով կյանքին վտանգ սպառնացող վերքեր, իսկ ավելի ուշ հիվանդանոցում մահացել է:

Բ. Դատաքննությունը

38. 2010 թվականի հունիսի 21-ին գործը փոխանցվել է դատաքննության՝ Կոտայքի մարզային դատարան: Ոստիկանության ծառայողներ Ա.Հ.-ն, Մ.Հ.-ն, Գ.Դ.-ն եւ Գ.Ղ.-ն դատարանում ցուցմունք են տվել որպես գործով մեղադրյալներ:

39. Ոստիկանության ծառայող Ա.Հ.-ն հերքել է, որ Վահան Խալաֆյանի նկատմամբ վատ վերաբերմունք է ցուցաբերել եւ պնդել, որ դեպքը տեղի ունենալու ժամանակ ներկա չի եղել: Աղմուկ լսելուց հետո նա շտապել է ոստիկանության ծառայող Կ.Մ.-ի աշխատասենյակ, որտեղ տեսել է Վահան Խալաֆյանին գետնին արնահոսելիս: Ոստիկանության ծառայող Մ.Հ.-ն դանակը ձեռքին կանգնած է եղել

նրա գլխավերեւում եւ ասել, որ Վահան Խալաֆյանը դանակով հարվածներ է հասցրել ինքն իրեն: Այն բանից հետո, երբ Ա.Հ.-ն հիվանդանոցից վերադարձել է, ոստիկանության ծառայող Մ.Հ.-ից պարզել է, որ վերջինս եւ ոստիկանության ծառայողներ Գ.Դ.-ն եւ Գ.Ղ.-ն հասկացել են, որ դանակը վերցրած Վահան Խալաֆյանը ցանկացել է դանակահարել իրեն եւ փորձել են խլել դանակը նրա ձեռքից, ինչի հետեւանքով ծեծկռտուք է տեղի ունեցել, որի ժամանակ դանակը մտել է նրա որովայնը: Ա.Հ.-ն այդ ժամանակ խորհուրդ է տվել Մ.Հ.-ին ոչ մեկին չպատմել այդ մասին: Մինչեւ 2010 թվականի ապրիլի 21-ին հարցաքննության ներկայանալը նա եւ Մ.Հ.-ն համաձայնության են եկել համանման ցուցմունքներ տալ: Սակայն հետագայում Մ.Հ.-ն սկսել էր նրան սուտ մեղադրանքներ ներկայացնել վատ աշխատանքային հարաբերությունների պատճառով: Հետեւաբար նրան առաջադրված մեղադրանքները շինծու էին, եւ նա օգտագործվում էր որպես քավության նոխազ: Ոստիկանության ծառայող Ա.Հ.-ն նաեւ մեղադրել է Մ.Հ.-ին Վահան Խալաֆյանի նկատմամբ վատ վերաբերմունքի, այն է՝ նրան զուգարան ուղեկցելիս գլուխը պատին հարվածելու համար:

40. Ոստիկանության ծառայող Մ.Հ.-ն ընդունել է իր մեղքը եւ հաստատել, որ Ա.Հ.-ն վատ է վարվել Վահան Խալաֆյանի հետ՝ հարվածներ հասցնելով նրա ոտքերին, որովայնին եւ գլխին: Նա պատմել է դանակահարության միջադեպը՝ ավելացնելով, որ երբ Ա.Հ.-ն Կ.Մ.-ի աշխատասենյակում ծեծի է ենթարկել Վահան Խալաֆյանին, վերջինս պատահաբար դիպել է պահարանին, ինչի հետեւանքով դուռը թեթեւակի բացվել է:

41. Ոստիկանության ծառայողներ Գ.Դ.-ն եւ Գ.Ղ.-ն պնդել են, որ Ա.Հ.-ն աշխատասենյակը լքելուց առաջ միայն մեկ անգամ է ապտակել Վահան Խալաֆյանին: Գ.Դ.-ն հայտնել է, որ մինչդատական վարույթի ընթացքում տրված իր ցուցմունքները, որոնց համաձայն ինքը մի քանի ապտակ է տեսել, եղել են ոչ ճշգրիտ (տե՛ս վերեւում՝ 25-րդ եւ 28-րդ պարբերությունները)՝ հավելելով, որ հնարավոր է՝ բռունցքի այլ հարվածներ կամ ապտակներ չի նկատել, քանի որ հեռուստացույց դիտելիս է եղել: Գ.Ղ.-ն հայտնել է, որ միայն մեկ ապտակ է նկատել, քանի որ Ա.Հ.-ն փակել էր տեսադաշտը: Նա ապտակի մասին չի նշել իր

մինչդատական ցուցմունքում (տե՛ս վերեւում՝ 25-րդ պարբերությունը), քանի որ այն չի համարել վատ վերաբերմունք: Գ.Ղ.-ն հավելել է նաեւ, որ ինքն ականատես չի եղել դանակահարությանը եւ միայն տեսել է, թե ինչպես է Վահան Խալաֆյանը դանակը վայր գցում:

42. Երկրորդ դիմումատուն դատարանում ցուցմունք է տվել այն մասին, որ ինքը նախկինում երբեք չի նկատել իր եղբոր վրա ինքնավնասման հետեւանքով հասցված որեւէ վնասվածք եւ նման բան նրանից չի լսել:

43. Երրորդ դիմումատուն՝ որպես Վահան Խալաֆյանի իրավահաջորդ, պնդել է Մարզային դատարանում, որ Վահան Խալաֆյանը ծեծի է ենթարկվել ոստիկանության ծառայող Կ.Մ.-ի աշխատասենյակում, ինչի հետեւանքով նա ստացել է ուղեղի վնասվածք եւ կորցրել է գիտակցությունը, ինչը, ինքնին, դրսեւորվել է տարբեր աշխտանիշներով, այդ թվում՝ փսխմամբ: Հանցագործությունը թաքցնելու նպատակով ոստիկանության ծառայողները՝ ենթադրաբար Մ.Հ.-ն, այնուհետեւ մահացու հարվածներ է հասցրել Վահան Խալաֆյանի որովայնին, որ այն նմանվեր ինքնասպանության, որից հետո դանակի վրայից սրբել են մատնահետքերը եւ մաքրել Վահան Խալաֆյանի փսխունքը դեմքի ու հագուստի վրայից: Երրորդ դիմումատուն պահանջել է փոփոխել ոստիկանության ծառայողների դեմ ներկայացված մեղադրանքները:

44. Մարզային դատարանը լսել է նաեւ բժիշկ փորձագետին (տե՛ս վերեւում՝ 17-րդ պարբերությունը), հետքաբանական փորձագետին (տե՛ս վերեւում՝ 19-րդ պարբերությունը) եւ հոգեբաններից մեկին (տե՛ս վերեւում՝ 29-րդ պարբերությունը):

45. Բժիշկ փորձագետը բացառել է Վահան Խալաֆյանի՝ սեփական փսխունքից խեղդվելը, քանի որ եթե անգամ փսխունքը հնարավոր լիներ մաքրել նրա դեմքից եւ բերանի հատվածից, ապա նրա բրոնխային խողովակները կլցվեին փսխունքով, մինչդեռ դրանք մաքուր են եղել: Նրա որովայնի երկու վնասվածքները՝ համապատասխանաբար 12 սմ եւ 3 սմ խորությամբ, վկայում էին ինքն իրեն վնասելու փորձ կատարելու մասին: Այն դեպքերում, երբ վնասվածքների

խորությունը հավասար էր, ավելի դժվար էր որոշել դրանց հերթականությունը, սակայն տարբեր խորություններ ունեցող վնասվածքները բնորոշ էին ինքնավնասմանը: Նրա կարծիքով՝ դանակի առաջին հարվածը եղել է ավելի կարճ, քանի որ ինքնասպանության փորձ կատարելիս անձն առաջին հերթին ինքն իրեն կհարվածեր մակերեսորեն, սակայն հետո կդիմեր ավելի մեծ ռիսկի եւ դանակով ավելի վստահ հարված կհասցներ: Ինքնավնասումը սովորաբար հասցվում է մարմնի դիմային հատվածներին, որոնք ավելի տեսանելի ու հասանելի են: Անձը կարող է իրեն դանակով հարվածել ավելի քան մեկ անգամ, եւ եղել են դեպքեր, երբ մարդիկ իրենց հասցրել են դանակի ավելի քան 20 հարված: Նման դեպքերի համեմատ Վահան Խալաֆյանի դեպքը նվազագույն չափով ինքնավնասում է պարունակել: Ուստի, հաշվի առնելով վերքերի ուղղությունը եւ դրանց հատկանիշները, պարզ է դարձել, որ դրանք բնորոշ են ինքնասպանությանը:

46. Հետքաբանության փորձագետը հաստատել է ավելի վաղ կատարած իր եզրահանգումները (տե՛ս վերեւում՝ 19-րդ պարբերությունը)՝ հավելելով, որ հնարավոր է որոշակի տեսակի նյութերի կամ մասերի վրա մատնահետքեր չլինեն: Այս դեպքում դանակի կոթի մի կողմի նախշերը, ինչպես նաեւ գամերը, խաթարել են դանակի կոթի ընդհանուր հարթ մակերեսը, եւ այդ պատճառով նման մասերը պիտանի չեն եղել վերլուծության համար: Հետեւաբար կոթի վրա մատնահետքեր չեն հայտնաբերվել: Ավելին, կոթն ունեցել է ոչ միատարր մակերես, եւ հնարավոր է, որ մատնահետքեր մնացած չլինեն: Փորձագետն այնուհետեւ բացատրել է, որ հնարավոր է, որ ճարպային հետքերը հեռացվեին: Առաջին հերթին, դրանք կարող էին գոլորշիանալ որոշակի ժամանակ անց: Երկրորդ, դրանք կարող էին մաքրվել ցանկացած առարկայի միջոցով: Այնուամենայնիվ, եթե օգտագործվի այնպիսի ներծծող մակերես ունեցող առարկա, ինչպիսին, օրինակ, թուղթն է, դա միայն կխեղաթյուրի այն, ինչ տպվում է, սակայն ամբողջությամբ չի հեռացնի դրանք: Ճարպային հետքերը կարելի է մաքրել նաեւ կտորի, ձեռքի ափի մի կողմի եւ այլ առարկաների միջոցով:

47. Հոգեբան-փորձագետը նշել է, որ մարդիկ տարբեր կերպ են արձագանքում սթրեսային իրավիճակներին, ինչպես եղավ Վահան Խալաֆյանի

դեպքում. ոմանք կարող են արձագանքել կառուցողականորեն, ոմանք դիմադրում են, ոմանք էլ կարող են դիմել ինքնավնասման, չնայած այդ վարքագիծը շատ տարածված չի եղել փորձագետի հետազոտության ոլորտում:

48. 2010 թվականի սեպտեմբերի 18-ին երրորդ դիմումատուն Մարզային դատարանից պահանջել է նշանակել քննչական փորձարարություն, ինչպիսին է դեպքի հանգամանքների վերարտադրումը, որպեսզի պարզի, թե արդյոք իրատեսական է, որ դրանք տեղի են ունեցել այնպես, ինչպես նկարագրել են ոստիկանության ծառայողները (տե՛ս վերեւում՝ 13-րդ պարբերությունը): Մարզային դատարանը մերժել է պահանջը՝ քրեական դատավարության վերաբերելի կանոններին չհամապատասխանելու հիմքով:

49. 2010 թվականի նոյեմբերի 29-ին Կոտայքի մարզային դատարանը վճիռ է կայացրել:

Ոստիկանության ծառայող Ա.Հ.-ն մեղավոր է ճանաչվել ՔՕ-ի 309-րդ հոդվածի 3-րդ մասով՝ լիազորությունների սահմանազանցման համար, որն ուղեկցվել է բռնությամբ եւ ծանր հետեւանքներ է առաջացրել, եւ դատապարտվել է ութ տարի ժամկետով ազատազրկման: Դատարանը հաստատված է համարել, որ նա Վահան Խալաֆյանի նկատմամբ վատ վերաբերմունք է ցուցաբերել նախ իր աշխատասենյակում, իսկ ավելի ուշ՝ Կ.Մ.-ի աշխատասենյակում, ինչը հանգեցրել է Վահան Խալաֆյանի ինքնասպանությանը (տե՛ս վերեւում՝ 37-րդ պարբերությունը): Դատարանը մերժել է Ա.Հ.-ի պնդումները (տե՛ս վերեւում՝ 39-րդ պարբերությունը) եւ գտել, որ նրա մեղքն ապացուցված է ոստիկանության ծառայողներ Մ.Հ.-ի, Գ.Դ.-ի եւ Գ.Ղ.-ի ցուցմունքներով եւ գործում առկա այլ ապացույցներով: Նրա պնդումներն առ այն, թե իրեն մեղադրել են ոստիկանության ծառայող Մ.Հ.-ի հետ վատ աշխատանքային հարաբերությունների պատճառով, կամ այն, որ Վահան Խալաֆյանը դանակահարվել է ծեծկռտուքի հետեւանքով, հակասական են եւ ոչ համոզիչ: Լիովին հիմնավորվել է, որ նա Վահան Խալաֆյանի նկատմամբ վատ վերաբերմունք է ցուցաբերել ժամը 16:30-ից 17:00-ն ընկած ժամանակահատվածում, ինչը միակ հակասությունն էր ոստիկանության ծառայող Մ.Հ.-ի ցուցմունքի, համաձայն

որի՝ վատ վերաբերմունքը տեւել էր որոշ ժամանակ, եւ ոստիկանության ծառայողներ Գ.Դ.-ի եւ Գ.Ղ.-ի ցուցմունքների միջեւ, համաձայն որոնց՝ նրանք ականատես են եղել ընդամենը մեկ-երկու ապտակի։

Ոստիկանության ծառայող Մ.Հ.-ն մեղավոր է ճանաչվել ՔՕ-ի 308-րդ հոդվածի 1-ին մասով, եւ նրա նկատմամբ նշանակվել է երկու տարի ժամկետով կասեցված պատիժ։ Դատարանը վճռել է, որ նա ականատես է եղել Վահան Խալաֆյանի նկատմամբ վատ վերաբերմունքին, սակայն այն կանխելու համար չի միջամտել։

Ոստիկանության ծառայողներ Գ.Դ.-ն եւ Գ.Ղ.-ն արդարացվել են 308-րդ հոդվածի 1-ին մասով։ Դատարանը վճռել է, որ նրանք նույնպես ականատես են եղել վատ վերաբերմունք ցուցաբերելու որոշ դեպքերի, սակայն դա տեղի է ունեցել այնքան կարճ եւ արագ (մեկ կամ երկու ապտակ), որ անհիմն էր ակնկալել, որ նրանք կկանխեն դա։

Դատարանը, ի վերջո, մերժել է երրորդ դիմումատուի պնդումները (տե՛ս վերեւում՝ 43-րդ պարբերությունը)՝ գտնելով, որ դրանք հակասում են գործում առկա ապացույցներին, հատկապես՝ բժիշկ փորձագետի՝ դատարանում արված հայտարարությանը, որը վերաբերում էր Վահան Խալաֆյանի բրոնխային խողովակներում փսխունքի բացակայությանը։

50. 2010 թվականի դեկտեմբերի 28-ին երրորդ դիմումատուն վերաքննիչ բողոք է ներկայացրել, որում նա, *inter alia*, պնդել է, որ Վահան Խալաֆյանը մահացել է ցուցաբերված վատ վերաբերմունքի, այլ ոչ թե ենթադրյալ ինքնասպանության հետեւանքով, որը կեղծվել էր ոստիկանության ծառայողների կողմից՝ հանցագործությունը կոծկելու համար։ Այնուամենայնիվ, քննության ընթացքում քննվել է իրադարձությունների նկարագրության միայն ինքնասպանության վարկածը։ Մարզային դատարանը բացահայտորեն չի ճանաչել Վահան Խալաֆյանի կյանքի իրավունքի, խոշտանգումների չենթարկվելու եւ ազատության ու անվտանգության իրավունքի խախտումը։ Քննչական մարմինը եւ Մարզային դատարանը չեն իրականացրել օբյեկտիվ քննություն եւ չեն պարզել

ճշմարտությունը։ Վահան Խալաֆյանին սպանող անձանց ինքնությունը չի բացահայտվել, եւ նրանք չեն ստացել համարժեք եւ համաչափ պատիժներ։

51. Չհստակեցված օրերին մեղադրյալը նույնպես վերաքննիչ բողոքներ է ներկայացրել։

52. 2011 թվականի հունիսի 15-ին Վերաքննիչ քրեական դատարանը, արագացված ընթացակարգով գործը քննելով, անփոփոխ է թողել Մարզային դատարանի վճիռը։ Այն որոշել է նաեւ համաներում կիրառել՝ ազատ արձակելով ոստիկանության ծառայող Մ.Հ.-ին նշանակված պատժից եւ մեկ երրորդով կրճատելով ոստիկանության ծառայող Ա.Հ.-ի պատժի մնացած մասը։ Ինչ վերաբերում է երրորդ դիմումատուի՝ քննչական փորձարարություն անցկացնելու մասին պահանջին, ապա դեպքի նման վերարտադրությունը ոչ միայն կհակասեր քրեական դատավարության համապատասխան կանոններին՝ վտանգելով դրա մասնակիցների կյանքը կամ առողջությունը, այլեւ չէր կարող նույնիսկ համապատասխանել այն իրական հանգամանքներին, որոնցում Վահան Խալաֆյանը ինքնավնասում էր կատարել, հատկապես նրա հոգեբանական վիճակի առումով։

53. 2011 թվականի հուլիսի 14-ին դիմումատուն վճռաբեկ բողոք է ներկայացրել։

54. 2011 թվականի օգոստոսի 18-ին Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքը ճանաչել է անընդունելի՝ հիմքերի բացակայության պատճառով։

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

I. ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ (2003Թ.)

1. Կյանքի եւ առողջության դեմ ուղղված հանցագործություններ

55. Քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասը (Ինքնասպանության հասցնելը) նախատեսում է, որ սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու ճանապարհով անձին անուղղակի դիտավորությամբ կամ անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

56. 119-րդ հոդվածը (Խոշտանգումը), որը գործում էր տվյալ պահին, նախատեսում էր առավելագույնը երեք տարի ժամկետով ազատազրկում խոշտանգման համար, այն է՝ ցանկացած այնպիսի գործողություն, որի միջոցով դիտավորյալ կերպով անձին պատճառվում է ուժեղ ցավ կամ մարմնական կամ հոգեկան տառապանք (բացառությամբ այն դեպքերի, երբ այն ծանր կամ միջին ծանրության վնաս է պատճառել առողջությանը, որի դեպքում արարքները պետք է քննվեին ՔՕ-ի համապատասխան այլ դրույթների համաձայն): Մի շարք ծանրացնող հանգամանքների առկայության դեպքում պատժի ժամկետը երեքից դարձել է յոթ տարի:

2. Պետական ծառայության դեմ ուղղված հանցագործություններ

57. 308-րդ հոդվածի 1-ին մասով (Պաշտոնեական լիազորությունները չարաշահելը) նախատեսվում է, որ պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելը կամ ծառայողական պարտականությունները չկատարելը՝ շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով, որն էական վնաս է պատճառել անձանց, կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին, հասարակության կամ պետության օրինական շահերին, պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով, կամ կալանքով՝ երկուսից երեք ամիս ժամկետով, կամ

ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով:

58. 309-րդ հոդվածի 3-րդ մասով (Պաշտոնեական լիազորություններն անցնելը) սահմանվում է, որ պաշտոնատար անձի կողմից դիտավորությամբ այնպիսի գործողություններ կատարելը, որոնք ակնհայտորեն դուրս են եկել նրա լիազորությունների շրջանակից եւ էական վնաս են պատճառել անձանց, կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին, հասարակության կամ պետության օրինական շահերին, ինչն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետեւանքներ, պատժվում է ազատազրկմամբ՝ վեցից տասը տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

3. 2015 թվականի փոփոխությունները

59. 2015 թվականի հունիսի 9-ին ՔՕ-ում կատարվել են փոփոխություններ: Համաձայն համապատասխան հիմնավորման՝ 119-րդ հոդվածով համարժեք պատասխան չէր տրվում խոշտանգման հանցագործությանը: Այդ դրույթով սահմանված հանցանքը ենթակա էր քրեական հետապնդման միայն տուժողի բողոքի հիման վրա: Ավելին, այդ դրույթը վերաբերում էր միայն մասնավոր անձանց եւ նույնիսկ իր շրջանակից բացառում էր առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառող ցանկացած արարք: Արդյունքում պետական պաշտոնյաների կողմից կատարված խոշտանգումների եւ վատ վերաբերմունքի մյուս դրսեւորումները գործնականում ենթարկվել են քրեական հետապնդման ՔՕ-ի այլ դրույթների համաձայն, այդ թվում՝ 308-րդ եւ 309-րդ հոդվածների համաձայն, որոնք, սակայն, մի շարք տարրերի պատճառով այդպիսի արարքների համար չեն նախատեսել համապատասխան իրավական արձագանք: Հետեւաբար խոշտանգման հանցագործությունն արգելող նոր դրույթի կարիք կար:

60. «Պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունները» կատեգորիայում ավելացվել է նոր՝ 309.1 հոդվածը՝ «Խոշտանգումը» վերտառությամբ, որը նախատեսում է պատիժ՝ ֆիզիկական ուժեղ ցավ կամ

հոգեկան ուժեղ տառապանք պատճառելու համար, եթե դա կատարվել է պաշտոնատար անձի կողմից կամ նրա դրդմամբ, կարգադրությամբ կամ գիտությամբ։ 119-րդ հոդվածի «Խոշտանգումը» վերնագիրը փոփոխվել է «Ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը» վերնագրով՝ դրա շրջանակից բացառելով ՔՕ-ի նոր՝ 309.1 հոդվածի շրջանակում գտնվող ցանկացած արարք։

II. ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ (1999Թ.)

61. Քրեական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ տուժողի իրավահաջորդ է ճանաչվում նրա մերձավոր ազգականներից մեկը, որը ցանկություն է հայտնել քրեական գործով վարույթում իրականացնել մահացած կամ իր կամքն արտահայտելու ունակությունը կորցրած տուժողի իրավունքները եւ պարտականությունները:

ԻՐԱՎՈՒՆՔԸ

I. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 2-ՐԴ ԵՎ 3-ՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

62. Դիմումատուները բողոք են ներկայացրել այն մասին, որ ոստիկանությունում կալանքի տակ գտնվելիս Վահան Խալաֆյանի մահը եւ իշխանության մարմինների կողմից նրա մահվան հանգամանքների առթիվ արդյունավետ քննություն չիրականացնելը հանգեցրել են Կոնվենցիայի 2-րդ եւ 3-րդ հոդվածների խախտմանը, որոնք, այնքանով, որքանով վերաբերելի են, ունեն հետեւյալ բովանդակությունը.

Հոդված 2

«1. Յուրաքանչյուրի կյանքի իրավունքը պաշտպանվում է օրենքով...»:

Հոդված 3

«Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»:

Ա. Ընդունելիությունը

1. Կողմերի փաստարկները

63. Կառավարությունը նախ եւ առաջ նշել է, որ դիմումատուները չէին կարող պնդել, որ իրենք եղել են տուժող՝ Կոնվենցիայի 2-րդ եւ 3-րդ հոդվածների խախտման հետեւանքով, քանի որ քննությամբ պարզվել են Վահան Խալաֆյանի մահվան եւ նրա նկատմամբ վատ վերաբերմունքի հանգամանքները, եւ պատասխանատու բոլոր անձինք բացահայտվել եւ պատժվել են։ Ոստիկանության ծառայող Ա.Հ.-ն մեղավոր է ճանաչվել ՔՕ-ի 309-րդ հոդվածի 3-րդ մասով՝ պաշտոնեական լիազորությունները սահմանազանցելու եւ Վահան Խալաֆյանի իրավունքներին վնաս պատճառելու (այսինքն՝ նրա նկատմամբ վատ վերաբերմունքի) համար, որը հանգեցրել է ծանր հետեւանքների (այսինքն՝ նրա մահվան)։ Ոստիկանության ծառայող Մ.Հ.-ն նույնպես ՔՕ-ի 308-րդ հոդվածի 1-ին մասով մեղավոր է ճանաչվել՝ իր ծառայողական պարտականություններն անձնական շահերից ելնելով չկատարելու համար (տե՛ս վերեւում՝ 49-րդ պարբերությունը)։

64. Երկրորդ, ըստ Կառավարության՝ առաջին եւ չորրորդ դիմումատուները, այն է՝ մահացածի մայրը եւ քույրը, չեն ունեցել տուժողի կարգավիճակ Կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն իրենց բողոքների առնչությամբ նաեւ այն պատճառով, որ նրանցից ոչ մեկը չի եղել ներպետական վարույթների կողմ, եւ հետեւաբար նրանք չէին կարող ցույց տալ, որ իրենք մահացածի իրավահաջորդներն են։

65. Դիմումատուները համաձայն չէին Կառավարության հետ, որ Վահան Խալաֆյանի նկատմամբ վատ վերաբերմունքի եւ նրա մահվան համար պատասխանատու բոլոր անձինք բացահայտվել եւ պատժվել են։ Նրանք պնդել են, որ քննությունը մանրակրկիտ եւ արդյունավետ չի եղել, եւ մի շարք կարեւոր հարցեր մնացել են անպատասխան։ Քննչական մարմնի կողմից քննարկվել է միայն մեկ վարկած, այն է՝ ինքնասպանությունը, եւ ձեռնարկված բոլոր քննչական միջոցառումներն ուղղված են եղել կոնկրետ այդ վարկածի հաստատմանը։

Հանցագործություն կատարած անձանցից միայն չորսն են ներկայացվել դատաքննության, որոնցից երկուսն արդարացվել են, եւ միայն մեկը՝ ազատազրկվել, սակայն նույնիսկ նրան շնորհվել է համաներում: Ավելին, նա պատիժը կրել է կիսափակ ռեժիմով, ինչը ենթադրում էր բանտում անցկացնել միայն գիշերները: Հանցագործություն կատարած անձանցից եւ ոչ մեկը հատուկ չի պատժվել «խոշտանգում» կատարելու համար, քանի որ Հայաստանը չէր կատարել Եվրոպայի խորհրդին անդամակցելիս ստանձնած իր պարտավորությունը՝ իր ներպետական իրավունքում խոշտանգման համար քրեական պատժամիջոցներ սահմանելու մասով: Եթե ներպետական քրեական իրավունքում խոշտանգումը նախատեսվեր որպես առանձին հանցագործություն, ապա այդպիսի արարքների համար պատժվող անձինք համաներման իրավունք չէին ունենա: Ի վերջո, Վահան Խալաֆյանի իրավունքների խախտման համար պատասխանատու ոստիկանության մի շարք ծառայողների նկատմամբ քրեական հետապնդում ընդհանրապես չի իրականացվել (տե՛ս վերեւում՝ 36-րդ պարբերությունը):

66. Ինչ վերաբերում է մասնավորապես Կառավարության երկրորդ առարկությանը, ապա դիմումատուները, նախ եւ առաջ, նշել են, որ ներպետական իրավունքով արգելվում է մեկից ավելի անձանց մասնակցությունը քրեական վարույթներին՝ որպես տուժողի իրավահաջորդ (տե՛ս վերեւում՝ 61-րդ պարբերությունը): Ամեն դեպքում, եթե նույնիսկ առաջին եւ չորրորդ դիմումատուները ներպետական վարույթի ընթացքում հանդես չեն եկել որպես Վահան Խալաֆյանի իրավահաջորդներ, նրանք նրա մայրն ու քույրն են եւ չպետք է կրեն ապացուցման այն բեռը, որ իրենք տուժել եւ տառապանք են կրել իրենց որդու եւ եղբոր կորստի պատճառով:

2. Դատարանի գնահատականը

67. Դատարանը համարում է, որ Կառավարության առաջին առարկությունը սերտորեն կապված է դիմումատուների՝ Կոնվենցիայի 2-րդ եւ 3-րդ հոդվածների համաձայն ներկայացված բողոքների բովանդակության հետ եւ հետեւաբար պետք է միացվի ըստ էության քննությանը:

68. Ինչ վերաբերում է Կառավարության երկրորդ առարկությանը (տե՛ս վերեւում՝ 64-րդ պարբերությունը), ապա համաձայն Դատարանի նախադեպային իրավունքի՝ այն անձի ընտանիքի մտերիմ անդամները, այդ թվում՝ ծնողը կամ քույրը կամ եղբայրը, որի մահվան պատասխանատվությունը ենթադրաբար կրում է պատասխանող պետությունը, կարող են պնդել, որ Կոնվենցիայի 2-րդ հոդվածի ենթադրյալ խախտման անուղղակի տուժող են, իսկ այն հարցը, թե արդյոք նրանք մահացածի իրավահաջորդներն են, վերաբերելի չէ (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, *Վելիկովան ընդդեմ Բուլղարիայի* (որոշում) [*Velikova v. Bulgaria* (dec.)], թիվ 41488/98, ՄԻԵԴ 1999-V (քաղվածքներ), *Վան Քոլն ընդդեմ Միացյալ Թագավորության* [*Van Colle v. the United Kingdom*], թիվ 7678/09, § 86, 2012 թվականի նոյեմբերի 13, եւ *Այվազյանն ընդդեմ Հայաստանի* [*Ayvazyan v. Armenia*], թիվ 56717/08, § 60, 2017 թվականի հունիսի 1): Այն գործերով, ինչպիսին տվյալ գործն է, եթե ենթադրյալ վատ վերաբերմունքը սերտորեն կապված է տուժողի մահվան հետ, ապա ընտանիքի մտերիմ անդամները կարող են նաեւ իրավաչափորեն պնդել, որ իրենք Կոնվենցիայի 3-րդ հոդվածի թե՛ նյութաիրավական, թե՛ ընթացակարգային հայեցակետերի խախտման տուժող են (տե՛ս՝ *Կարպիլենկոն ընդդեմ Ուկրաինայի* [*Karpylenko v. Ukraine*], թիվ 15509/12, § 105, 2016 թվականի փետրվարի 11, հետագա մեջբերումներով): Այսպիսով հետեւում է, որ առաջին, երկրորդ եւ չորրորդ դիմումատուները, որոնք եղել են տուժողի մայրը, եղբայրը եւ քույրը, իրավունք ունեն բողոքներ ներկայացնելու Կոնվենցիայի 2-րդ եւ 3-րդ հոդվածների համաձայն՝ անկախ նրանից՝ նրանք մասնակցել են ներպետական վարույթներին որպես տուժողի իրավահաջորդներ, թե՝ ոչ: Հետեւաբար Կառավարության երկրորդ առարկությունը պետք է մերժվի:

69. Մյուս կողմից՝ չնայած Կառավարությունը բացահայտորեն չի վիճարկել երրորդ դիմումատուի «տուժողի» կարգավիճակը՝ ելնելով մահացածի հետ ունեցած փոխհարաբերություններից, այնուամենայնիվ, սույն համատեղելիության հայեցակետը *ratione personae* (անձանց շրջանակի առումով) պահանջում է Դատարանի կողմից *ex officio* (ի պաշտոնե) քննարկում *(տե՛ս, օրինակ՝ Սեյդիչը եւ Ֆինչին ընդդեմ Բոսնիայի եւ Հերցեգովինային* [ՄՊ] [*Sejdić and Finci v. Bosnia and Herzegovina* [GC]], թիվ 27996/06 եւ 34836/06, § 27, ՄԻԵԴ 2009թ.):

70. Դատարանը նշում է, որ երրորդ դիմումատուն տուժողի զարմիկն է եղել, որի՝ տուժողի կարգավիճակը, ի տարբերություն ընտանիքի մտերիմ անդամների, ինքնաբերաբար չի ճանաչվում Դատարանի կողմից (տե՛ս *Ֆաբրիսը եւ Պարցիալեն ընդդեմ Իտալիայի [Fabris and Parziale v. Italy]*, թիվ 41603/13, § 38, 2020 թվականի մարտի 19): Չնայած ճիշտ է, որ Դատարանը վարույթ է ընդունել զարմիկների կողմից իրենց մերձավոր ազգականների մահվան վերաբերյալ ներկայացված գանգատները (տե՛ս, օրինակ՝ *Խայլոն ընդդեմ Ուկրաինայի* [*Khaylo v. Ukraine*], թիվ 39964/02, § 98, 2008 թվականի նոյեմբերի 13, Վան Մելլեն ընդդեմ Նիդեռլանդների (որոշում) [*Van Melle v. the Netherlands* (dec.)], թիվ 19221/08, 2009 թվականի սեպտեմբերի 29, *Արապխանովին ընդդեմ Ռուսաստանի* [*Arapkhanovy v. Russia*], թիվ 2215/05, §§ 7 եւ 107, 2013 թվականի հոկտեմբերի 3, եւ *Արմանի Դա Սիլվան ընդդեմ Միացյալ Թագավորության* [ՄՊ] [*Armani Da Silva v. the United Kingdom]* [GC]], թիվ 5878/08, §§ 12 եւ 186-189, 2016 թվականի մարտի 30), այնուամենայնիվ, այն նաեւ վճռել է, որ չորրորդ աստիճանի ազգակցական կապն ինքնին բավարար չէ, որ դիմողը տուժող ճանաչվի Կոնվենցիայի 34-րդ հոդվածի իմաստով (տե՛ս *Բելկիզա Կայան եւ այլք ընդդեմ Թուրքիայի* [*Belkıza Kaya and Others v. Turkey]*, թիվ 33420/96 եւ 36206/97, § 46, 2005 թվականի նոյեմբերի 22, եւ վերեւում հիշատակված՝ *Ֆաբրիսի եւ Պարցիալեի* գործը, § 38):

71. Սույն գործով երրորդ դիմումատուն ներպետական վարույթներում հանդես է եկել որպես տուժողի իրավահաջորդ (տե՛ս վերեւում՝ 15-րդ պարբերությունը): Դատարանում ներկայանալը հիմնավորող որեւէ այլ հիմք, բացի ազգակցական կապից, չի ներկայացվել: Այնուամենայնիվ, պարտադիր չէ, որ

անհատական գանգատները կարգավորող պայմանները համապատասխանեն դատարան դիմելու իրավունքի ազգային չափորոշիչներին: Այս մասով ազգային կանոնները կարող են ծառայել Կոնվենցիայի 34-րդ հոդվածով նախատեսված նպատակներից տարբեր այլ նպատակների, եւ չնայած այդ նպատակները երբեմն կարող են համանման լինել, այնուամենայնիվ, դրանք միշտ չէ, որ պետք է լինեն այդպիսին (տե՛ս *Սկոզարին եւ Ջունտան ընդդեմ Իտալիայի* [ՄՊ] [*Scozzari and Giunta v. Italy* [GC]], թիվ 39221/98 եւ 41963/98, § 139, ՄԻԵԴ 2000-VIII): Դատարանը գտնում է, որ այն փաստը, որ երրորդ դիմումատուն ներպետական վարույթում հանդես է եկել որպես տուժողի իրավահաջորդ, ինքնին բավարար չէ դատարան դիմելու նրա իրավունքը Դատարանում ճանաչելու համար: Այսպիսով, երրորդ դիմումատուի՝ որպես ազգական իրավաչափ շահ ունենալու մասին տեղեկությունների բացակայության պարագայում, ինչպես նաեւ հաշվի առնելով այն փաստը, որ մահացածի ընտանիքի մտերիմ անդամները, օրինակ՝ նրա մայրը կամ երկու քույրերը կամ եղբայրները, Դատարանում վարույթի կողմ են, Դատարանը գտնում է, որ երրորդ դիմումատուն չի կարող պնդել, որ ինքը դարձել է Կոնվենցիայի ենթադրյալ խախտման տուժող, եւ գանգատի այս մասը պետք է անընդունելի հայտարարվի՝ որպես Կոնվենցիայի դրույթների հետ անհամատեղելի՝ *ratione personae* մասով (համեմատե՛ք վերեւում հիշատակված՝ *Բելկիզա Կայան եւ այլք* գործը, §§ 46-48, եւ վերեւում հիշատակված՝ *Ֆաբրիսի եւ Պարցիալեի* գործը, §§ 39-41):

72. Ինչ վերաբերում է մնացած երեք դիմումատուներին, որոնց Դատարանը նպատակահարմարության նկատառումներով կշարունակի անվանել «դիմումատուներ», ապա Դատարանը նշում է, որ Կոնվենցիայի 2-րդ եւ 3-րդ հոդվածների համաձայն ներկայացված նրանց բողոքները ո՛չ ակնհայտորեն անհիմն են, ո՛չ էլ անընդունելի Կոնվենցիայի 35-րդ հոդվածում թվարկված որեւէ այլ հիմքով: Հետեւաբար դրանք պետք է հայտարարվեն ընդունելի:

Բ. Ըստ էության քննությունը

1. Կողմերի փաստարկները

ա) Դիմումատուները

73. Դիմումատուները վիճարկել են ինքնասպանության վարկածը եւ պնդել, որ Կառավարությունը չի տվել արժանահավատ, բավարար եւ համոզիչ բացատրություն: Բազմաթիվ ապացույցներ են եղել, այդ թվում՝ միջադեպի ժամանակ Վահան Խալաֆյանի կողմից դրսեւորված բազմաթիվ ախտանիշներ, որոնք վկայում են այն մասին, որ նա մահացել է ոստիկանության ծառայողների կողմից նրա նկատմամբ ցուցաբերված վատ վերաբերմունքի հետեւանքով ստացած ուղեղի լուրջ վնասվածքից: Հանցագործությունը թաքցնելու համար ոստիկանության ծառայողները նմանակել էին նրա ինքնասպանությունը: Դիմումատուները պնդում էին, որ անհնար էր, որ Վահան Խալաֆյանը կատարեր բոլոր ենթադրյալ գործողությունները մեկից երկու վայրկյանում, ինչպես պնդում էին ոստիկանության ծառայողները: Դանակի հարվածից ստացված վերքերի բնույթը եւ դիրքը նույնպես կասկածներ են հարուցել, որ դրանք կարող էին պատճառվել այդքան կարճ ժամանակում: Դանակի կոթի վրա մատնահետքեր չեն հայտնաբերվել, թեեւ տուժողը, ենթադրաբար, պահել է դանակը, եւ ոստիկանության ծառայողներից մեկը նույնպես բարձրացրել է այն՝ նորից պահարան դնելու համար, ինչից կարելի էր ենթադրել, որ դրանք սրբվել են: Ավելին, եթե տուժողը հաներ իր վերնահագուստը նախքան իրեն դանակահարելը, ապա նա չէր կարող իր շապիկի թեւատակերի հատվածում ունենալ կղանքի հետքեր (տե՛ս վերեւում՝ 29-րդ պարբերությունը), քանի որ նրա տաբատի եւ վերնահագուստի միջեւ կապը կընդհատվեր: Սրանից կարելի էր ենթադրել, որ նրա փորը մերկացվել էր ավելի ուշ, երբ նա արդեն պառկած էր հորիզոնական դիրքով: Ամեն դեպքում, Վահան Խալաֆյանի մահվան պատասխանատվությունը կրում էին իշխանության մարմինները՝ անկախ մահվան հանգամանքներից եւ պատճառներից եւ նրանից, թե արդյոք դա տեղի է ունեցել ինքնասպանության կամ վատ վերաբերմունքի հետեւանքով, թե՝ ոչ:

74. Դիմումատուները նաեւ պնդել են, որ իշխանության մարմինները չեն իրականացրել մահվան պատճառի մասով արդար եւ արդյունավետ քննություն: Քննվել է միայն ինքնասպանության վարկածը, եւ ձեռնարկված բոլոր քննչական

միջոցառումներն ուղղված են եղել այդ վարկածի հաստատմանը, մինչդեռ դիմումատուների պնդումներն առ այն, որ տուժողը մահացել է ոստիկանության կողմից դրսեւորած դաժանության անմիջական հետեւանքով, չեն դիտարկվել։ Հանցագործության վայրը չի պահպանվել, իսկ հիմնական ապացույց հանդիսացող դանակին ձեռք էին տվել։ Դանակի կոթի վրա մատնահետքեր չեն հայտնաբերվել, եւ միակ բացատրությունն այն է, որ դրանք սրբվել են։ Միջադեպը վերարտադրելու վերաբերյալ նրանց պահանջը, որը թույլ կտար պարզել, թե արդյոք հնարավոր էր Վահան Խալաֆյանի կողմից այդքան կարճ ժամկետում կատարել բոլոր գործողությունները, ինչպես պնդում էին ոստիկանության ծառայողները, մերժվել էր առանց հիմնավոր պատճառների։ Քննությամբ պատասխան չի տրվել այն հարցին, թե ինչպես կարող էր նրա թեւատակերի տակ կղանք հայտնաբերվել, եթե նա ենթադրաբար մերկացրել է իր փորը։ Սրանից կարելի էր ենթադրել, որ չընդհատվող կապ է եղել տաբատի եւ նրա շապիկի միջեւ, եւ որ նրա փորը մերկացվել է ավելի ուշ, երբ նրան պառկեցրել են հատակին։ Մի շարք իրարամերժ ցուցմունքներ չեն պարզաբանվել, իսկ տուժողի կրած բաճկոնն անհետացել է եւ նույնիսկ որպես իրեղեն ապացույց ներառված չի եղել։ Վատ վերաբերմունքի ոչ բոլոր հանգամանքներն են ենթարկվել քննության։ Նրանց իրավունքներն անհիմն կերպով սահմանափակվել են բողոքարկման վարույթում, քանի որ վերաքննիչ դատարանը կիրառել է արագացված ընթացակարգ եւ գործը քննել է ըստ վճռաբեկության կանոնների, այլ ոչ թե անցկացրել լիարժեք դատական քննություն։ Ներպետական դատարաններն ակնհայտորեն չեն ճանաչել տուժողի կյանքի իրավունքի խախտումը եւ չեն նշանակել արդար, համարժեք եւ համաչափ պատիժներ։ Միայն ոստիկանության ծառայող Ա.Հ.-ն է դատապարտվել ազատազրկման, սակայն նույնիսկ նա պատիժը կրել է կիսափակ ռեժիմով, այսինքն՝ քրեակատարողական հիմնարկում միայն գիշերներն անցկացնելով, եւ օգտվել է համաներումից՝ իր պատիժը կրճատելով մեկ երրորդով։

75. Դիմումատուներն ի վերջո պնդել են, որ տվյալ պահին եղել է համակարգային խնդիր, քանի որ Հայաստանի իրավունքով խոշտանգման համար քրեական պատժամիջոցներ նախատեսված չեն եղել։ ՔՕ-ի 119-րդ հոդվածը, որով արգելվում էր «խոշտանգումը» (տե՛ս վերեւում՝ 56-րդ պարբերությունը), կիրառելի էր միայն ոչ պետական դերակատարների նկատմամբ, եւ պետական

գործակալների կողմից կատարված խոշտանգումների գործողությունները սովորաբար ենթարկվել են քրեական հետապնդման՝ ՔՕ-ի 309-րդ հոդվածի համաձայն, որը ներառված էր «Պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունները» գլխում (տե՛ս վերեւում՝ 58-րդ պարբերությունը)։ Սույն հոդվածը, սակայն, չի պարունակում խոշտանգման սահմանում եւ բավարար հիմք չի տալիս այդպիսի արարքների համար համապատասխան պատիժ նշանակելու համար։ Այսպիսով, Վահան Խալաֆյանին խոշտանգողներից եւ ոչ մեկը չի պատժվել «խոշտանգման» համար։ Ավելին, եթե տվյալ պահին խոշտանգման համար պատժամիջոցներ լինեին, ապա նման պատժամիջոցները համաներման ենթակա չէին լինի։ Այս բացերն ընդունվել են իշխանության մարմինների կողմից, եւ օրենսդրական փոփոխություններ են առաջ քաշվել (տե՛ս վերեւում՝ 59-րդ եւ 60-րդ պարբերությունները)։

բ) Կառավարությունը

76. Կառավարությունը նշել է, որ իշխանության մարմիններն արժանահավատ, բավարար եւ համոզիչ բացատրություն են տվել Վահան Խալաֆյանի մահվանը հանգեցնող իրադարձություններին, ինչի արդյունքում մեղավորները պատժվել են։ Տրված բացատրությունն արժանահավատ էր, քանի որ այն հաստատված էր իրեղեն ապացույցներով, որոնք հիմնավորում էին այն, որ Վահան Խալաֆյանի վնասվածքները հասցվել են իր իսկ կողմից։ Մի շարք նյութեր, այդ թվում՝ հոգեբուժական փորձագիտական եզրակացությունը (տե՛ս վերեւում՝ 29-րդ պարբերությունը), ցույց են տվել, որ Վահան Խալաֆյանը նախքան միջադեպը գտնվել է հոգեբանական շատ լարված վիճակում։ Բացի այդ, եղել են ապացույցներ, որոնք ենթադրում էին, որ նրա վերքերը բնորոշ են եղել ինքն իրեն հասցված վնասվածքների (տե՛ս վերեւում՝ 45-րդ պարբերությունը)։ Կառավարությունն ընդունել է, որ ոստիկանության ծառայող Ա.Հ.-ի ապօրինի գործողությունների եւ Վահան Խալաֆյանի ինքնասպանության միջեւ կա ուղիղ պատճառահետեւանքային կապ, սակայն պնդել է, որ ոստիկանության

ծառայողները չեն իմացել եւ չէին կարող իմանալ Վահան Խալաֆյանի հոգեբանական վիճակի մասին, որպեսզի պատասխանատվություն կրեին նրա կյանքի կորստի համար։ Նրանք չէին կարող իմանալ, որ ճնշումների եւ իրեն հասցված թեթեւ վնասվածքների հետեւանքով նա կարող էր դանակահարել իրեն։ Այսպիսով, հաշվի առնելով մարդու վարքագծի անկանխատեսելիությունը՝ անհնարին եւ անհամաչափ բեռ կդրվեր իշխանության մարմինների վրա, եթե նրանք կրեին Վահան Խալաֆյանի ինքնավնասման պատասխանատվությունը նրա հոգեբանական վիճակի մասին նշանների կամ տեղեկությունների բացակայության պարագայում։

77. Կառավարությունը նաեւ պնդել է, որ քննությունը եղել է մանրակրկիտ եւ արդյունավետ, եւ պատասխանատու բոլոր անձինք բացահայտվել եւ պատժվել են։ Դեպքից անմիջապես հետո հարուցվել է քրեական գործ, եւ ձեռնարկվել են մի շարք միջոցառումներ, այդ թվում՝ դեպքի վայրի զննությունը, դատաբժշկական փորձաքննությունը, ոստիկանության ծառայողներ Մ.Հ.-ից եւ Գ.Դ.-ից ցուցմունքներ վերցնելը։ Վերցվել են Վահան Խալաֆյանի եղունգների եւ մազերի նմուշներ, անմիջապես նշանակվել են մի քանի դատաբժշկական փորձաքննություններ, այդ թվում՝ դատահետքաբանական եւ կենսաբանական փորձաքննություններ։ Միջադեպից երկու օր անց գործը ստանձնել է ՀՔԾ-ն, որը ձեռնարկել է բոլոր համապատասխան եւ անհրաժեշտ միջոցառումները՝ դեպքի հանգամանքները բացահայտելու ուղղությամբ։ Միջադեպի վերաբերյալ հավաքվել են մեծ քանակությամբ համապատասխան ապացույցներ, օրինակ՝ մի շարք փորձագիտական եզրակացություններ, ցուցմունքներ, հարցազրույցներ եւ առերեսումներ՝ Դատարանի նախադեպային իրավունքին համապատասխան։ Ինչ վերաբերում է դանակին, ապա ծայրի ստորին հատվածում որոշ հետքեր են հայտնաբերվել, սակայն դրանք համեմատական վերլուծության համար պիտանի չեն եղել։ Եթե մատնահետքերը դանակի վրայից սրբվել են, ինչպես պնդում են դիմումատուները, ապա դանակի վրա ընդհանրապես հետքեր չէին հայտնաբերվի։ Ինչ վերաբերում է դիմումատուների այն փաստարկին, որ քննվել է միայն ինքնասպանության վարկածը, ապա Կառավարությունը նշել է, որ 110-րդ

հոդվածով նախատեսված մեղադրանքը (Ինքնասպանության հասցնելը) քննության ընթացքում փոխարինվել է 309-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված մեղադրանքով (Պաշտոնեական լիազորություններն անցնելը), որով նախատեսվում էր շատ ավելի խիստ պատիժ: Ավելին, քննության ընթացքում որեւէ ապացույց ձեռք չի բերվել, որը կստիպեր իշխանության մարմիններին ենթադրել, որ եղել է իրադարձությունների այլ զարգացում, քան այն, ինչ բացահայտվել էր:

2. Դատարանի գնահատականը

78. Դատարանը միասին կքննի Կոնվենցիայի 2-րդ եւ 3-րդ հոդվածների համաձայն ներկայացված բողոքները՝ այդ դրույթներից բխող համընկնող սկզբունքների լույսի ներքո եւ հաշվի առնելով, որ այդ բողոքները ծագում են միեւնույն փաստերի ամբողջությունից:

79. Դատարանը կալանքի տակ գտնվող անձանց առնչությամբ նախկինում նշել է, որ այդ անձինք գտնվում են խոցելի իրավիճակում, եւ որ իշխանության մարմինները պարտավոր են ստանձնել նրանց պաշտպանությունը: Հետեւաբար երբ անհատին առողջ վիճակում տանում են ոստիկանության՝ կալանքի տակ պահելու վայր, եւ նա ազատվում է վնասվածքով, ապա պետության պարտականությունն է ներկայացնել արժանահավատ բացատրություն այն մասին, թե ինչպես են պատճառվել այդ վնասվածքները: Իշխանության մարմինների՝ անհատի նկատմամբ ոստիկանությունում կալանքի տակ պահելու վայրում վատ վերաբերմունք ցուցաբերելու համար պատասխանատվություն կրելու սույն պարտականությունը հատկապես պարտադիր է, երբ այդ անհատը մահանում է: Ապացույցները գնահատելիս Դատարանը, ընդհանուր առմամբ, կիրառել է ապացուցման «ողջամիտ կասկածից վեր» չափանիշը: Այնուամենայնիվ, նման ապացույցները կարող են բխել համատեղ գոյություն ունեցող՝ բավականաչափ արժանահավատ, հստակ եւ համահունչ ենթադրությունների կամ փաստի գոյության վերաբերյալ համանման անհերքելի կանխավարկածների առկայությունից: Այն դեպքում, երբ պետական մարմիններն ամբողջությամբ կամ

առավելապես ծանոթ են խնդրո առարկա իրադարձություններին, ինչպես օրինակ՝ իրենց հսկողության ներքո կալանքի տակ գտնվող անձանց պարագայում է, կառաջանան այդպիսի կալանավորման ընթացքում ստացված վնասվածքների եւ մահվան փաստի գոյության վերաբերյալ ծանրակշիռ կանխավարկածներ: Իսկապես, ապացուցման պարտականության առումով կարելի է համարել, որ բավարար եւ համոզիչ բացատրություն տրամադրելն իշխանության մարմինների պարտականությունն է (տե՛ս *Սալմանն ընդդեմ Թուրքիայի [ՄՊ] [Salman v. Turkey* [GC]], թիվ 21986/93, §§ 99 եւ 100, ՄԻԵԴ 2000-VII, եւ *Բուիդն ընդդեմ Բելգիայի [ՄՊ] [Bouyid v. Belgium* [GC]], թիվ 23380/09, § 83, ՄԻԵԴ 2015թ.):

80. Ինչ վերաբերում է մասնավորապես պաշտոնական արդյունավետ քննություն իրականացնելու պահանջին, ապա Դատարանը կրկնում է՝ որպեսզի քննությունն արդյունավետ լինի, այն իրականացնելու համար պատասխանատու անձինք պետք է անկախ լինեն նրանցից, ում այն ուղղված է: Սա նշանակում է ոչ միայն աստիճանակարգային կամ ինստիտուցիոնալ կապի բացակայություն, այլեւ գործնական անկախություն (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, *Մոկանուն եւ այլք ընդդեմ Ռումինիայի* [*Mocanu and Others v. Romania*] ([ՄՊ] [GC], թիվ 10865/09 եւ 2 այլ, § 320, ՄԻԵԴ 2014թ. (քաղվածքներ)):

81. Բացի այդ, քննությունը պետք է հանգեցնի պատասխանատու անձանց բացահայտմանը եւ անհրաժեշտության դեպքում՝ պատժելուն: Չնայած սա ոչ թե արդյունքի, այլ միջոցների պարտավորություն է, այնուամենայնիվ, քննության ցանկացած թերություն, որը խաթարում է գործի հանգամանքները կամ պատասխանատու անձին բացահայտելու դրա կարողությունը, կառաջացնի արդյունավետության պահանջվող չափանիշին չհամապատասխանելու վտանգ (նույն տեղում՝ §§ 321-322, եւ վերեւում հիշատակված՝ *Արմանի Դա Սիլվայի* գործը, § 233):

82. Ավելին, քննությունը պետք է լինի մանրակրկիտ, ինչը նշանակում է, որ իշխանության մարմինները պետք է միշտ լրջորեն ձգտեն պարզելու, թե ինչ է տեղի ունեցել, եւ իրենց քննությունը փակելու համար չպետք է հիմնվեն հապճեպ արված կամ անհիմն եզրակացությունների վրա (նույն դեպքում, § 325): Հետաքննության

համար ակնհայտորեն անհրաժեշտ միջոցները պատշաճորեն չձեռնարկելը խոչընդոտում է գործի փաստական հանգամանքները պարզելու եւ անհրաժեշտության դեպքում՝ մեղավորներին ի հայտ բերելու՝ քննության հնարավորությունը (տե՛ս *Կոլեւին ընդդեմ Բուլղարիայի* [*Kolevi v. Bulgaria*], թիվ 1108/02, § 201, 2009 թվականի նոյեմբերի 5, եւ վերեւում հիշատակված՝ *Արմանի Դա Սիլվայի* գործը, § 234)։

83. Ի վերջո, երբ պաշտոնական քննությունը հանգեցրել է ազգային դատարաններում վարույթ հարուցելուն, դատավարությունն ամբողջությամբ, այդ թվում՝ դատաքննության փուլը, պետք է բավարարի Կոնվենցիայի 2-րդ եւ 3-րդ հոդվածներով նախատեսված դրական պարտավորության պահանջները (տե՛ս *Օներյիլդիզն ընդդեմ Թուրքիայի* [ՄՊ] [*Öneryıldız v. Turkey* [GC]], թիվ 48939/99, § 95, ՄԻԵԴ 2004-XII, եւ *Սաբալիքն ընդդեմ Խորվաթիայի* [*Sabalić v. Croatia*], թիվ 50231/13, § 97, 2021 թվականի հունվարի 14)։ Սա ներառում է վարույթի ավարտին նշանակված պատժամիջոցները (տե՛ս *Մյումյունն ընդդեմ Բուլղարիայի* [*Myumyun v. Bulgaria*], թիվ 67258/13, § 67, 2015 թվականի նոյեմբերի 3)։ Չնայած բացարձակ պարտավորություն չկա, որ բոլոր քրեական հետապնդումները հանգեցնեն դատապարտման կամ որոշակի պատժի, այնուամենայնիվ, ազգային դատարանները ոչ մի դեպքում չպետք է պատրաստ լինեն թույլ տալ, որ կյանքին վտանգ սպառնացող հանցագործությունները կամ ֆիզիկական եւ մտավոր անձեռմխելիության նկատմամբ ծանր հարձակումները մնան անպատիժ, կամ լուրջ հանցագործությունները պատժվեն չափազանց թեթեւ պատիժներով։ Հետեւաբար Դատարանի խնդիրն է վերանայել այն, թե արդյոք դատարաններն իրենց եզրակացությանը հանգելիս գործը հանձնել են Կոնվենցիայի 2-րդ եւ 3-րդ հոդվածներով պահանջվող մանրազնին քննությանը, թե՝ ոչ, եւ որքանով է դա հաջողվել, որ չխաթարվեն գործող դատական համակարգի զսպող ազդեցությունը եւ այն դերի կարեւորությունը, որը նա պետք է խաղա կյանքի իրավունքի խախտումները կանխելու կամ վատ վերաբերմունքն արգելելու գործում (տե՛ս վերեւում հիշատակված՝ *Օներյիլդիզի* գործը, § 96, եւ վերեւում հիշատակված՝ *Սաբալիքի* գործը, § 97)։

84. Սույն գործով Կառավարությունը հիմնվել է պաշտոնական քննության արդյունքների վրա՝ Վահան Խալաֆյանի մահվան եւ ոստիկանությունում կալանքի տակ պահվելու ժամանակ ստացած վնասվածքների վերաբերյալ իրենց բացատրության մեջ, մինչդեռ դիմումատուները վիճարկել են ինքնասպանության պաշտոնական վարկածը։ Հետեւաբար Դատարանը գտնում է, որ պարզելու համար, թե արդյոք պետությունը բավարար չափով կատարել է Վահան Խալաֆյանի մահվան եւ վնասվածքների համար պատասխանատվության ենթարկելու իր պարտավորությունը, նախ եւ առաջ, այն պետք է հաշվի առնի իշխանության մարմինների կողմից իրականացված քննությունը եւ նրանց կողմից արված եզրակացությունները (համեմատե՛ք *Գուլյանն ընդդեմ Հայաստանի* [*Gulyan v. Armenia*], թիվ 11244/12, § 84, 2018 թվականի սեպտեմբերի 20)։

ա) Ընթացակարգային հայեցակետը

85. Դատարանը Վահան Խալաֆյանի մահվան գործով իրականացված պաշտոնական քննության եւ դրան հաջորդած դատավարության առնչությամբ դիտարկում է, որ նրա ինքնասպանության վարկածը իշխանության մարմինների կողմից հապճեպ կերպով եւ առանց որեւէ հիմնավորման ընդունվել է քննության հենց առաջին օրը (տե՛ս վերեւում՝ 14-րդ պարբերությունը)։ Ընդ որում, իրադարձությունների այս նկարագրությունն ամբողջությամբ հիմնված է եղել ոստիկանության ծառայողների՝ Մ.Հ.-ի եւ Գ.Դ.-ի ցուցմունքների վրա (տե՛ս վերեւում՝ 11-13-րդ պարբերությունները), որոնք մասնակից են եղել միջադեպին եւ չէին կարող անաչառ վկաներ համարվել։ Հատկանշական է, որ ինքնասպանությունը որպես մահվան պատճառ քննելու որոշումը կայացվել է այն փուլում, երբ քննությունը վարվում էր ԿՄԳՔՎՔԲ-ի կողմից, այսինքն՝ ոստիկանության այն մարմնի կողմից, որը քննում էր Վահան Խալաֆյանի կողմից ենթադրաբար կատարված հանցագործությունը (տե՛ս վերեւում՝ 6-րդ պարբերությունը), եւ ունեցել է աստիճանակարգային եւ ինստիտուցիոնալ կապ Ոստիկանության Չարենցավանի բաժնի ծառայողների հետ՝ դրանով իսկ

չունենալով անհրաժեշտ անկախությունը։

86. Դատարանը նշում է, որ ընթացքի փոփոխություն չի եղել նույնիսկ այն բանից հետո, երբ քննությունը ստանձնել է անկախ մարմինը, այսինքն՝ ՀՔԾ-ն (տե՛ս վերեւում՝ 16-րդ պարբերությունը), որը շարունակել է քննությունը վարել նույն հիմքով՝ երբեք լրջորեն կասկածի տակ չդնելով իրադարձությունների նկարագրությունը, որը տրամարդրվել էր ոստիկանության ծառայողների կողմից, կամ փորձելով ստուգել այլ հնարավոր սցենարներ (համեմատե՛ք՝ *Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի* [*Virabyan v. Armenia*], թիվ 40094/05, § 153, 2012 թվականի հոկտեմբերի 2, եւ վերեւում հիշատակված՝*Գուլյանի* գործը, § 86)՝ չնայած օրըստօրե աճող այն նշաններին, որ նրանք արժանահավատ եւ վստահելի վկաներ չեն եղել։ Դատարանն այս կապակցությամբ վկայակոչում է քննության ընթացքում ծառայողների կողմից տրված ակնհայտ սուտ ցուցմունքները, այդ թվում՝ Վահան Խալաֆյանի նկատմամբ վատ վերաբերմունքի փաստը թաքցնելը եւ իշխանության մարմիններին մոլորեցնելը նրա ձերբակալման ժամանակի վերաբերյալ, ինչպես նաեւ վարույթի տարբեր փուլերում նրանց ցուցմունքների եւ նրանցից յուրաքանչյուրի կողմից տրված ցուցմունքների միջեւ առկա բազմաթիվ հակասությունները (տե՛ս վերեւում՝ 11-13-րդ, 21-րդ, 24-րդ, 25-րդ, 28-րդ եւ 39-41-րդ պարբերությունները)։ Մարմինների կողմից ոչ մի կարեւորություն չի տրվել կեղծ եւ մոլորեցնող ցուցմունքների փաստին։ Նշված հակասությունները ճշտելու իրական փորձեր նույնպես չեն արվել։

87. Դատարանը հատկապես կարեւորում է այն փաստը, որ չնայած միջադեպին նրանց անմիջական մասնակցությանը՝ տվյալ ոստիկանության ծառայողներն անմիջապես չեն մեկուսացվել եւ չեն հարցաքննվել՝ կանխելու ցանկացած հնարավոր դավադրություն, որը, Դատարանի կարծիքով, զգալի թերություն է եղել քննության համարժեքության մեջ (տե՛ս, *mutatis mutandis* (համապատասխան փոփոխություններով), *Ռամսահայը եւ այլք ընդդեմ Նիդեռլանդների* [ՄՊ] [*Ramsahai and Others v. the Netherlands* [GC]], թիվ 52391/99, § 330, ՄԻԵԴ 2007-II)։ Փաստորեն, բացի ոստիկանության ծառայող Մ.Հ.-ից վերցված ցուցմունքից, որն ըստ երեւույթին եղել է ոստիկանության ավագ ծառայողի կողմից՝

պաշտոնական քննության շրջանակներից դուրս (տե՛ս վերեւում՝ 12-րդ պարբերությունը), քննչական մարմինները չեն հարցաքննել ոստիկանության ծառայողներ Մ.Հ.-ին, Գ.Դ.-ին եւ Ա.Հ.-ին միջադեպից մինչեւ ութ օր հետո (տե՛ս վերեւում՝ 21-րդ պարբերությունը)։

88. Դատարանը նաեւ նշում է, որ քննության միակողմանիությունն արտացոլվել է նաեւ դատաբժշկական փորձաքննությունների անցկացման եղանակում, ինչը կասկածի տակ է դնում համապատասխան փորձագիտական եզրակացությունների օբյեկտիվությունն ու համարժեքությունը։ Այսպիսով, փորձագետներին մշտապես ներկայացվել է ինքնասպանության վարկածը որպես հաստատված փաստ, եւ չնայած զգալի ուշադրություն է դարձվել ինքնասպանության տեսությանը, այնուամենայնիվ, նրանց երբեք չեն խնդրել կամ խրախուսել դիտարկել կամ մեկնաբանել որեւէ այլ հավանական սցենար։ Այսպիսով, թեեւ բժիշկ փորձագետը չի բացառել ինքնասպանության հավանականությունը (տե՛ս վերեւում՝ 17-րդ պարբերությունը) եւ ավելի ուշ իր ցուցմունքում նույնիսկ ենթադրել է, որ դանակահարության հետեւանքով հասցված վերքերը բնորոշ են ինքնասպանությանը (տե՛ս վերեւում՝ 45-րդ պարբերությունը), քննչական մարմինները եւ դատարանները չեն հետաքննել, թե արդյոք հնարավոր է եղել բեմադրել ենթադրյալ ինքնասպանությունը, կամ արդյոք տվյալ վերքերը հասցվել են այլ հանգամանքներում, թե՝ ոչ։ Նրանք նաեւ չեն քննել, թե ինչպես է հնարավոր եղել, որ դանակի կոթը, որը Վահան Խալաֆյանը ենթադրաբար օգտագործել է իրեն դանակահարելու համար, եւ որն ավելին, մինչեւ միջադեպն ըստ երեւույթին որպես խոհանոցային դանակ կանոնավոր կերպով օգտագործվել է, չունենա մատնահետքեր, եւ նաեւ այն, թե արդյոք հնարավոր էր, որ դրանք սրբվել են (տե՛ս վերեւում՝ 19-րդ պարբերությունը)։ Թեեւ հետքաբանության փորձագետին ըստ երեւույթին խնդրել են մեկնաբանել այդ հնարավորությունը դատաքննության ընթացքում (տե՛ս վերեւում՝ 46-րդ պարբերությունը), թվում է, թե այդ առումով որեւէ կարեւորություն չի տրվել նրա պնդումներին։ Չի կարելի նաեւ ասել, որ բավարար բացատրություն է տրվել մատնահետքերի բացակայության վերաբերյալ։ Իշխանության մարմինների կողմից այս հարցը մանրակրկիտ

չուսումնասիրելը հատկապես մտահոգիչ է թվում, քանի որ եղել են նշաններ, որ այդ ապացույցները կարող էին կեղծվել ոստիկանության ծառայողների կողմից՝ հանցանքի վայրի ամբողջականությանը նրանց միջամտության եւ միջադեպից հետո դանակին ձեռք տալու պատճառով (տե՛ս վերեւում՝ 13-րդ պարբերությունը):

89. Ինչ վերաբերում է միջադեպի վերարտադրման պահանջը մերժելուն, ապա Դատարանի իրավասությունը չէ շահարկել, թե արդյոք նման քննչական միջոցառման արդյունքը կարող էր նպաստել ճշմարտության բացահայտմանը: Այնուամենայնիվ, հրամայական է, որ Կոնվենցիայի 2-րդ եւ 3-րդ հոդվածների խախտման մասին պնդումների հետ կապված դեպքերում, հատկապես, երբ խոսքը վերաբերում է այնպիսի զգայուն հարցի, ինչպիսին է վատ վերաբերմունքը եւ կասկածյալի մահը ոստիկանության կալանքի տակ պահելու վայրում, իշխանության մարմինները ձեռնարկեն բոլոր հնարավոր եւ անհրաժեշտ միջոցները, որոնք կարող են արդյունավետորեն նպաստել այդ նպատակին: Դատարանը նշում է, որ Մարզային դատարանը որեւէ պատճառաբանություն չի ներկայացրել պահանջվող քննչական փորձարարության կարգադրումը մերժելու համար (տե՛ս վերեւում՝ 48-րդ պարբերությունը), իսկ Վերաքննիչ դատարանի կողմից ներկայացված նման մերժման պատճառները, Դատարանի կարծիքով, բավականաչափ համոզիչ չեն թվում (տե՛ս վերեւում՝ 52-րդ պարբերությունը):

90. Դատարանը նաեւ նշում է, որ Վահան Խալաֆյանի նկատմամբ վատ վերաբերմունքի հանգամանքների քննությունն իրականացվել է նմանատիպ ձեւով: Իշխանության մարմինների եզրահանգումները նույնպես ամբողջությամբ հիմնված են եղել ոստիկանության նույն ծառայողների ցուցմունքների վրա (տե՛ս վերեւում՝ 24-րդ, 25-րդ եւ 28-րդ պարբերությունները)՝ առանց հաշվի առնելու այդ վկաների նկատմամբ վստահության պակասը, եւ նույն կերպ հապճեպ կերպով ընդունվել են որպես միակ վարկած՝ առանց որեւէ այլ հնարավոր սցենարների ուսումնասիրության, այդ թվում՝ դեպքի վայրում վատ վերաբերմունք դրսեւորող մեկից ավելի հանցագործներ լինելու հավանականությունը: Վահան Խալաֆյանի նկատմամբ վատ վերաբերմունքի հանգամանքները ներկայացվել են շատ վերացական ձեւով, զուրկ են եղել մանրամասներից եւ ստեղծել են երկու կարճ

դրվագով սահմանափակված լինելու տպավորություն՝ մեկը վաղ առավոտյան Ա.Հ.-ի աշխատասենյակում, իսկ մյուսը՝ Կ.Մ.-ի աշխատասենյակում ժամը 17:00-ի սահմաններում: Դատարանը նշում է սակայն, որ նախքան դանակահարության դեպքը տեղի ունենալը Վահան Խալաֆյանը մոտ ութ ժամ փաստացի մնացել է ոստիկանության բաժնում: Այդ ամբողջ ընթացքում նա եղել է շատ խոցելի վիճակում, նրա կալանավորումը հիմնված չի եղել ձերբակալման մասին որոշման վրա եւ փոխարենը հիմնավորվել է իր հետ «զրուցելու» անհրաժեշտությամբ, նրան ազատությունից զրկելը չի արձանագրվել, եւ նա զրկված է եղել կասկածյալի կողմից իրացվող ցանկացած իրավունքից: Չի կարելի ասել, որ իշխանության մարմինները բավականաչափ եւ անկեղծ ջանքեր են գործադրել՝ բացահայտելու այն վերաբերմունքի բոլոր հանգամանքները, որը երկար ժամանակ ցուցաբերվել է նրա նկատմամբ, երբ գտնվել է նման անորոշ իրավիճակում, ինչպես նաեւ պարզելու ոստիկանության ծառայողների՝ դեպքերի նկարագրությունում առկա բազմաթիվ հակասությունները:

91. Ի վերջո, Դատարանը չի կարող անտեսել այն փաստը, որ նույնիսկ եթե ոստիկանության ծառայողներից մեկն ի վերջո մեղավոր է ճանաչվել Վահան Խալաֆյանի նկատմամբ բռնություն գործադրելու մեջ, նրա նկատմամբ կիրառվել է համաներում, որի արդյունքում պատժի ժամկետը կրճատվել է (տե՛ս վերեւում՝ 52-րդ պարբերությունը): Այնուամենայնիվ, Դատարանն արդեն վճռել է, որ պետական գործակալների կողմից խոշտանգման կամ վատ վերաբերմունքի հետ կապված գործերում չպետք է հանդուրժել համաներումը եւ ներումը (տե՛ս *Յեթերն ընդդեմ Թուրքիայի [Yeter v. Turkey]*, թիվ 33750/03, § 70, 2009 թվականի հունվարի 13, եւ վերեւում հիշատակված՝ *Մոկանուն եւ այլք* գործը, § 326): Այս սկզբունքը նույնպես չի պահպանվել սույն գործում:

92. Վերոշարադրյալը բավարար է, որպեսզի Դատարանը եզրակացնի, որ իշխանության մարմինները չեն կարողացել իրականացնել Վահան Խալաֆյանի մահվան եւ նրա նկատմամբ վատ վերաբերմունքի հանգամանքների արդյունավետ քննությունը: Հանգելով այս եզրակացությանը՝ Դատարանն անհրաժեշտ չի գտնում պարզել նաեւ, թե արդյոք տվյալ պահին Հայաստանի իրավական համակարգում

եղել է համակարգային խնդիր, թե ոչ՝ կապված խոշտանգումների վերաբերյալ գործերով իրավական պաշտպանության համարժեք միջոցների առկայության հետ (տե՛ս վերեւում՝ 75-րդ պարբերությունը):

93. Համապատասխանաբար տեղի է ունեցել Կոնվենցիայի 2-րդ եւ 3-րդ հոդվածների ընթացակարգային հայեցակետի խախտում:

94. Հանգելով այս եզրակացությանը՝ Դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ Կառավարության առաջին առարկությանը (տե՛ս վերեւում՝ 63-րդ պարբերությունը): Դատարանը կրկին նշում է, որ դիմումատուի համար բարենպաստ ցանկացած որոշում կամ միջոց սկզբունքորեն բավարար չէ նրան «տուժողի» կարգավիճակից զրկելու համար, եթե ազգային մարմինները հստակորեն կամ ըստ էության ընդունած չլինեն Կոնվենցիայի խախտումը եւ այնուհետեւ դրա համար հատուցում տրամադրած չլինեն (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, *Սկորդինոն ընդդեմ Իտալիայի (թիվ 1)* [ՄՊ] [Scordino v. Italy (no. 1) [GC]], թիվ 36813/97, § 180, ՄԻԵԴ 2006-V): Տրամադրվող փոխհատուցումը պետք է լինի համապատասխան եւ բավարար: Սա կախված կլինի գործի բոլոր հանգամանքներից՝ հատուկ ուշադրություն դարձնելով Կոնվենցիայի քննարկվող խախտման բնույթին (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, *Գեֆգենն ընդդեմ Գերմանիայի* [ՄՊ] [*Gäfgen v. Germany* [GC]], թիվ 22978/05, § 116, ՄԻԵԴ 2010թ.): Մահվան հանգեցնող դիտավորյալ վատ վերաբերմունքի դեպքերում բավարար փոխհատուցում տրամադրելու համար իշխանության մարմիններն առաջին հերթին եւ առավելապես պետք է իրականացնեն այնպիսի մանրակրկիտ եւ արդյունավետ քննություն, որն ունակ է հանգեցնելու պատասխանատու անձանց բացահայտմանը եւ պատժելուն (տե՛ս *Նիկոլովան եւ Վելիչկովան ընդդեմ Բուլղարիայի* [*Nikolova and Velichkova v. Bulgaria*], թիվ 7888/03, §§ 55-56, 2007 թվականի դեկտեմբերի 20, եւ վերեւում հիշատակված՝ *Գեֆգենի* գործը, § 116):

95. Սույն գործով Դատարանը նշում է, որ Վահան Խալաֆյանի մահվան եւ վատ վերաբերմունքի վերաբերյալ քրեական գործը փոխանցվել է դատաքննության, եւ ոստիկանության երկու ծառայողներ ի վերջո մեղավոր են ճանաչվել, որոնցից

մեկը մասնավորապես Վահան Խալաֆյանի նկատմամբ վատ վերաբերմունք ցուցաբերելու համար (տե՛ս վերեւում՝ 49-րդ պարբերությունը)։ Այնուամենայնիվ, ինչպես արդեն նշվել է վերեւում, այդ քրեական գործով քննությունը մանրակրկիտ եւ արդյունավետ չի եղել եւ իրականացվել է Կոնվենցիայի 2-րդ եւ 3-րդ հոդվածների ընթացակարգային պահանջների լուրջ խախտումներով։ Հետեւաբար չի կարելի ասել, որ պետությունը համապատասխան եւ բավարար փոխհատուցում է տրամադրել այդ դրույթների ենթադրյալ խախտումների համար։ Հետեւաբար Դատարանը համարում է, որ դիմումատուները դեռեւս կարող են պնդել, որ իրենք Կոնվենցիայի 2-րդ եւ 3-րդ հոդվածների թե՛ նյութաիրավական, թե՛ ընթացակարգային հայեցակետերի ենթադրյալ խախտման տուժող են, եւ մերժում է Կառավարության առաջին առարկությունը։

բ) Նյութաիրավական հայեցակետը

96. Դատարանը գտնում է, որ ազգային մակարդակում իրականացված քննությունն ակնհայտորեն այնքան ոչ լիարժեք է եղել եւ այնքան կարեւոր հարցեր է թողել անպատասխան, որ այն չի կարողացել պարզել դիմումատուների ազգականի մահվան հետ կապված իրական հանգամանքները։ Հետեւաբար Դատարանը չի կարող այդ քննության ավարտին արված եզրակացություններն ընդունել որպես հավաստի եզրակացություններ, հատկապես, որ դրանք չէին հիմնավորվել որեւէ օբյեկտիվ ապացույցով (համեմատե՛ք վերեւում հիշատակված՝ *Գուլյանի* գործի հետ, § 91 եւ դրանում հիշատակված գործերի հետ)։ Չնայած դիմումատուների փաստարկն առ այն, որ Վահան Խալաֆյանը մահացել է գլխուղեղի վնասվածքից, ուղղակիորեն հակասում է դատաբժշկական փորձագետի՝ նրա մահվան պատճառի վերաբերյալ արված եզրակացություններին (տե՛ս վերեւում՝ 17-րդ պարբերությունը), այնուամենայնիվ, Դատարանի խնդիրը չէ պարզել տուժողի մահվան պատճառը։ Ինչ վերաբերում է Կոնվենցիայի 2-րդ հոդվածի նյութաիրավական հայեցակետին, ապա Դատարանը գտնում է, որ ոստիկանությունում կալանքի տակ գտնվելու ընթացքում նրա մահվան եւ ստացած

վնասվածքների վերաբերյալ Կառավարության կողմից տրված բացատրությունը գոհացուցիչ, բավարար եւ համոզիչ չէր: Հետեւաբար նրանք չեն կատարել կալանքի տակ գտնվելիս Վահան Խալաֆյանի հանդեպ վերաբերմունքի համար պատասխանատվություն կրելու եւ դրանով իսկ իշխանության մարմինների վրա դրված ապացուցման բեռն իրենց վրա վերցնելու իրենց պարտականությունը:

97. Համապատասխանաբար տեղի է ունեցել Կոնվենցիայի 2-րդ եւ 3-րդ հոդվածների նյութաիրավական հայեցակետի խախտում:

II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ ԵՎ 13-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

98. Դիմումատուները նաեւ պնդել են, որ Վահան Խալաֆյանի ձերբակալման, նրա մահվան հանգամանքների եւ հետագա քննության մասով տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի եւ 13-րդ հոդվածի խախտում։

99. Կառավարությունը վիճարկել է այս պնդումները։

100. Հաշվի առնելով գործի փաստերը, կողմերի փաստարկները եւ Կոնվենցիայի 2-րդ եւ 3-րդ հոդվածների համաձայն կատարած իր եզրահանգումները (տե՛ս վերեւում՝ 93-րդ եւ 97-րդ պարբերությունները)՝ Դատարանը համարում է, որ այն քննել է սույն գանգատում բարձրացված հիմնական իրավական հարցը եւ չկա սույն բողոքների ընդունելիության եւ ըստ էության քննության վերաբերյալ առանձին որոշում կայացնելու անհրաժեշտություն (տե՛ս, *mutatis mutandis*, *Կամիլ Ուզունն ընդդեմ Թուրքիայի [Kamil Uzun v. Turkey]*, թիվ 37410/97, § 64, 2007 թվականի մայիսի 10, եւ *Իրավական ռեսուրսների կենտրոնը՝ ի դեմս Վալենտին Կամպեանուի, ընդդեմ Ռումինիայի* [ՄՊ] [*Centre for Legal Resources on behalf of Valentin Câmpeanu v. Romania* [GC]], թիվ 47848/08, § 156, ՄԻԵԴ 2014թ.)։

III. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

101. Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն՝

> «Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»։

Ա. Վնասը

102. Դիմումատուները պահանջել են ընդհանուր 1 267 000 ՀՀ դրամ՝ նյութական վնասի մասով, որը ներառել է հուղարկավորության, գերեզմանի եւ դատական նիստերին ներկա գտնվելու համար ծախսված բենզինի ծախսերը: Նրանք նաեւ պահանջել են 30 000 եվրո (ԵՎՐՈ) ՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում:

103. Կառավարությունը նշել է, որ դիմումատուների պահանջները չեն հիմնավորվել փաստաթղթային ապացույցներով: Նրանց ոչ նյութական վնասի վերաբերյալ պահանջները նույնպես չափազանցված են:

104. Դատարանը նշում է, որ դիմումատուներն ապացույցներով չեն հիմնավորել նյութական վնասի իրենց պահանջները, ուստի մերժում է սույն պահանջները: Այն, այնուամենայնիվ, դիմումատուներին միասին շնորհում է 50 000 ԵՎՐՈ՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում՝ գումարած գանձման ենթակա ցանկացած հարկ:

Բ. Ծախսերը եւ ծախքերը

105. Դիմումատուները նաեւ պահանջել են 200 000 եւ 695 000 ՀՀ դրամ՝ ներպետական վարույթում իրենց երկու օրինական ներկայացուցիչների ծախսերի համար: Նրանք նշված վերջին գումարի վերաբերյալ ներկայացրել են երրորդ դիմումատուի եւ փաստաբանի միջեւ կնքված պայմանագիր:

106. Կառավարությունը պնդել է, որ դիմումատուների՝ 200 000 ՀՀ դրամի վերաբերյալ պահանջը չի հիմնավորվել փաստաթղթային ապացույցներով: Ինչ վերաբերում է մնացած գումարին, ապա տվյալ պայմանագիրը ներառել է միայն այդ գումարը վճարելու խոստում: Ավելին, համաձայն պայմանագրի՝ այդ վճարումն արդեն պետք է կատարված լիներ, մինչդեռ դիմումատուները դրա մասին որեւէ ապացույց չեն ներկայացրել:

107. Դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ դիմումատուն

ունի ծախսերի ու ծախքերի հատուցման իրավունք այնքանով, որքանով ապացուցվում է, որ դրանք իրականում կատարվել են, անհրաժեշտ են եղել, եւ որ դրանց չափը եղել է ողջամիտ: Սույն գործով Դատարանը նշում է, որ իրենց առաջին փաստաբանի մասով պահանջվող գումարը, այն է՝ 200 000 ՀՀ դրամը, որեւէ ապացույցով չի հիմնավորվել: Ինչ վերաբերում է 695 000 ՀՀ դրամ գումարին, ապա Դատարանը նշում է, որ այդ գումարը վճարելու պարտավորությունը պարունակող պայմանագիրը կնքվել է երրորդ դիմումատուի կողմից, որը համարվել է տուժողի կարգավիճակ չունեցող անձ, եւ որի բողոքները ճանաչվել են անընդունելի (տե՛ս վերեւում՝ 71-րդ պարբերությունը): Դատարանը, հետեւաբար, մերժում է դիմումատուների՝ ծախսերի եւ ծախքերի մասին պահանջները:

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ՝

1. Միաձայն *միացնում է* գործի ըստ էության քննությունը Կառավարության այն առարկությանը, որը վերաբերում է դիմումատուների՝ տուժողի կարգավիճակին, եւ *մերժում է* այն.

2. Միաձայն *հայտարարում է* Վահան Խալաֆյանի մահվան վերաբերյալ Կոնվենցիայի 2-րդ եւ 3-րդ հոդվածների համաձայն առաջին, երկրորդ եւ չորրորդ դիմումատուների բողոքներն ընդունելի, իսկ մնացածը՝ անընդունելի.

3. Միաձայն *վճռում է*, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 2-րդ եւ 3-րդ հոդվածների նյութաիրավական եւ ընթացակարգային հայեցակետերի խախտում.

4. Ձայների՝ վեց կողմ եւ մեկ դեմ հարաբերակցությամբ *վճռում է*, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի եւ 13-րդ հոդվածի համաձայն ներկայացված բողոքների ընդունելիության եւ ըստ էության քննության վերաբերյալ առանձին որոշում կայացնելու անհրաժեշտություն չկա.

5. Միաձայն *վճռում է,* որ՝

ա) պատասխանող պետությունը Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան վճիռը վերջնական դառնալու օրվանից երեք ամսվա

ընթացքում պետք է առաջին, երկրորդ եւ չորրորդ դիմումատուներին համատեղ նյութական վնասի դիմաց վճարի 50 000 եվրո (հիսուն հազար եվրո)՝ գումարած գանձման ենթակա ցանկացած հարկ, որը պետք է փոխարկվի պատասխանող պետության արժույթով՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով,

բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո՝ մինչեւ վճարման օրը, պետք է հաշվարկվի վերոնշյալ գումարների նկատմամբ պարզ տոկոսադրույք՝ չկատարման ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի չափով՝ գումարած երեք տոկոսային կետ.

6. Միաձայն *մերժում է* դիմումատուների՝ արդարացի փոխհատուցման պահանջի մնացած մասը։

Կատարված է անգլերենով եւ գրավոր ծանուցվել է 2022 թվականի նոյեմբերի 8-ին՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ եւ 3-րդ կետերի։

Իլզե Ֆրայվըրթ	Գաբրիել Կուչկո-Ստադլմայեր
Քարտուղարի տեղակալ	Նախագահ